

G. Orgelreise

Zuckerschneide-

Sg Leipziger

1934

891.99

0-79

1934



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՐԴԱՐԱՆԻ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ՎԱՀԱՄԱԿԱՆԻ ՄԸ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԿԱՄ

ԿԱՏԱՐԵԱԼ ՄԱՐԴ ԸԼԼԱԼՈՒ  
ԱՐՈՒԵՍՏԸ

ՀԵԳԻ ՔԵՐԱԿՅ



ԳԻՆ 1 1/2 Տ. Դ.

891.99  
0-79

Տպագր. Յակով Փափազյան

1934

13 APR 2011

# Վ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

18, Ծարտ Թէղփիք, 18

Գ.Ա.Հ.Ի.Բ.Հ.

## ՄԵԹ ԶԵՂ 2

ԶԵՂ ԶՈՒՄ ԳԻՆԵՐ

	b. դ.
Արդասաւորութիւն (Զօլա)	25
Ճալմալատուպլը	14
Տարագրի մը յուշատեսը (Մալէղեան)	10
Թաղականին կինը (Օտեան)	15
Միջնորդ տէր պապա (Օտեան)	15
Տօքթ. Վարդան	5
Զարշըլը Արթին աղա (Օտեան - Կիւրծեան)	4
Հայկական սինէմա (Սարուխան - Օտեան)	25
Ամիրային աղջիկը (Երուխան)	15
Պատմութիւն հայ գրականութեան	20
Վէրք Հայոստանի (Արավեան)	15
Միմօն Փէհիկվան	10
Սպանող սէրը	10
Միրոյին ռճիր մը (Պուրժէ)	10
Աշուղ զարիս	5
Ազգատին պատիւը (կազմեան) 5:2	20
Յիշատակարան Ա. և Բ. համար	50
Պրիւտան (Զէլաքօ)	20
Հինդ շաբաթ. օդապարիկով	15
Աւզեւորութիւն (Ժ. Վերն)	6
Կորուսեալ կտակը	5
Անրջանիք (Պարսամեան)	4

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Վ. ԶԱՐԴԱՐԵԱՆԻ

891.99  
0-79

ԵՐՈՒԱՆԴ 08606

## ՎԱՀԱՌԱԿԱՆԻ ՄԸ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԿԱՄ

## ԿԱՏԱՐԵԱԼ ՄԱՐԴ ԸԼԼԱԼՈՒ

ԱՐՈՒԵՍՏԸ

ՀԵՂ ԻՆԱԿԸ



6636

ԳԱՀԻՐԵ

Տպագր. Յակոբ Փափաղեան

1934

03 SEP 2013  
1155 99A 61

61446

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ամիս մը առաջ տոմարակալ բարեկամ մը եկաւ զիս գտաւ:

— Այս ծրարը քեզի յանձնելու համար բերի, ըստւ:

— Ի՞նչ է տեսնենք, հարցուցի միջակորչն հետաքըրքուած:

— Բնդօրինակութեան տետրակ մը:

— Ի՞նչ կ'ուզես որ ընկմ այդ տետրակդ, ևս ո՛չ վաճառական եմ և ոչ ալ սովորութիւն ունիմ գրած նամակներուս ընդօրինակութիւնը տետրակի մը մէջ պահելու:

Այս տետրակը արգէն լեցուած է նամակներու ընդօրինակութեամբ, յարեց այցելուն, մտիկ ըրէ՛ որ խնդիրը բացատրեմ: Կը յիշես անշուշտ որ ասկէ վեց ամիսի չափ առաջ ազգը դժբախտութիւն ունեցաւ կորսնցնելու իր երեւելի վաճառականներէն մէկը, Գոզմա էֆ. Դամիանոսեանը . . .

— Այո՛, կատարելոսպէս կը յիշեմ, ընդմիջեցի, կը յիշեմ նաև որ այս առթիւ մեր ազգային թերթերը երկար բարակ ներբողականներ հիւսեցին, հանգուցեալը ներկայացնելով իբրև հայ առեւտրակոն հանձարին մէկ մարմնաւորումը, որ համեստ վիճակէ մը կրցած էր հետզհետէ բարձրանոլ և մեծ հարստութեան մը տիրանալ իր ուշիմաւթեան, պարկեշտութեան, ուղղամտութեան, ձեռներէցութեան և ուրիշ այս կարգի առեւտրական առաքինութիւններու չնորհիւ:

— Շատ լաւ կը յիշես կար ուրեմն, շարունակեց տոմարակալը: Գիտես անշուշտ որ ես ալ Գոզմա էֆ. ինքով տասներկու տարիէ ի վեր տոմարակալ էի:

— Գիտեմ որ տոմարակալ ես, բայց չեմ գիտեր որ անոր ծառայութեան մէջ էիր:

— Իր մահուընէն ետքը աղան՝ որ Եւրոպա կը



գտնուէր՝ եկաւ և չուզելով իր հօրը առուտուրը շուրջունակել, բոլոր հաշիւները մաքրեց և մեղի ալ ճամբուռ դրու:

— Անշուշտ նիւթական հատուցում մը ընելով:

— Այս, պղտիկ բան մը տուաւ տմէն մէկերնուս, բայց խնդիրը այդ չէ: իրեւ ամենէն հին ու փորձառու պաշտօնեայ՝ տետրակներուն, և լն. քննութիւնը և յարդարումը ինծի յանձնուեցաւ և այդ առթիւ ձեռքսանցաւ ընդօրինակութեան այս տետրակը որ ընաւ կապակցութիւն չունի հանդուցեալին առեւտրական գործառութիւններուն հետ:

— Հապա ի՞նչ կը պարունակէ, հարցուցի:

— Չուտ անձնական ու մտերմական նամակներ, մեծ մասը իր զաւկին սւլլուած, երբ այս վերջինը ժընէվ՝ առեւտրական վարժարանի ուսանող էր:

— Եւ ի՞նչպէս կ'ըլլայ որ այդ տետրակը փոխանակ իր օրինաւոր տէրերուն՝ Գոզմա էֆ.ի ընտանիքին յանձնելու՝ կ'ուզես ինծի տալ: Ներէ՛ որ գիտել տամ թէ ըրածդ պարկեշտ պաշտօնեայի մը արարքը չէ:

— Այդ խլճահարութիւնը պահ մը ես ալ ունեցայ, պատասխանեց խօսակիցս, բայց յետոյ լաւ մը խորհելով նամոզւեցայ թէ ըրածիս մէջ անպարկեշտութիւն մը չիկար:

— Ի՞նչպէս կրցար գոյացնել այդ համոզումը:

— Նախ՝ այս տետրակը քեղի յանձնելով բնաւ գիտաւորութիւն չունիմ զայն իրեւ զէնք մը գործածէլ Դամբիսնոսեան ընտանիքին զէմ և ռանքած ընել, յետոյ այդ նամակները, ինչպէս ըսի, հանգուցեալին վաճառականական գործառնութեանց հետ բնաւ յարաբերութիւն չունին և ասկէ զատ ո և է անձնական կամ ընտանեկան գաղտնիք չեն պարունակեր ու ո և է կերպով չեն կրնար ազարտել թէ՛ Գոզմա էֆ.ի և թէ ո և է մէկու մը անունը: Անոնք պարզապէս ցոյց կուտան հայ վաճառականի մը հոգեբանութիւնը, իր

յատրէելակերպը, իր կեանքի ըմբռնումը, իր խոէաները և այս անսակէտով կրնան շատ օգտակար ըլլալ քեզի:

— Բայց ի՞նչ կերպով կը կարծէք որ կրնամ զանոնք գործածել:

— Այդ նամակները ընտրանոք հրատարակելով:

— Առանց արտօնուած ըլլալու նամակագրին կամ զանոնք ընդունողներուն կողմէ . . . :

— Ի՞նչ անսովոր փափկանիատութիւն կամ խըլաձահարութիւն, գոչեց բարեկամա, միթէ չե՞ս տեսներ որ տմէն օր թերթերու, հաւաքածոներու կամ տարեցոյցներու մէջ մեռած անձերու ընտանեկան կամ մը տերմական նամակները կը հրատարակուին, առանց արտօնութեան, բաւ է որ գրութիւնը արժէք մը ուշնեայ, դրական կամ պատմական:

— Այդ մասին իրաւունք ունիս, ստիպուեցայ խոստովանիլ:

— Ասկէ զատ կրնաս բան մը ընել այսինքն նամակը ընդունողներաւն հասցէներն ու անունները փոփոխել, որովհետեւ անձերը կարեւորութիւն չունին՝ այլ միայն նամակներուն ողին:

Բոլոր այս տուարկութիւնները խախտած էին իմ առաջին ընդդիմութիւններ:

— Թո՛ղ մնայ այդ տետրակը, մէյ մը աչքէ անցընեմ, ըսի:

— Կեցցե՛ս, գոչեց տոմարակալը ուրախութեամբ բա՛ւ է որ մէյ մը աչքէ անցընես, ալ անկէ ետքը վստահ եմ որ պիտի կրնաս օգտակարապէս գործածել զայն:

Եւ բարեկամա մեկնեցաւ ընդօրինակութեան տետրը քովս ձգելով:

Անցան օրեր և ժամանակ չունեցայ թղթատելու տետրակը: Կիրակի առտու մը որոշեցի քանի մը երես կտրդալ, տեսնելու համար թէ իրաւցնէ բանի մը կըրնային ծառայել այդ նամակները, ինչպէս բարեկամա հաւատած էր:

Հազիւ թէ երկու երեք նամակ կարդացած էի՝ ո՛ւ  
Նկրաց տետրակը ձեռքէս թողուլ և մինչեւ գեշեր լա-  
փեցի ամբողջ գրութիւնները:

Երբեք հայ վաճառականը իր հոգեկան մերկու-  
թիւնը չէր պարզած այսքան կատարեալ կերպով: Հայ  
պուրժուան էր որ ինքինք կը ցուցագրէր անպատ-  
կառ ինքանաւանութեամբ մը, իր գաղափարներովը  
հպարտ և իր համոզումներովը խանդավառուած:

Առաջին նամակը կը կրէր 1905 յունուար թուա-  
կանը և վերջինը 1913 փետրուար թուականը: Այս-  
պէս եօթը տարուան շրջան մըն էր որ կ'անցնէր աչ-  
քիս առջեւէն, — և ինչ տեսդային՝ յուղումնալից  
շրջան, — բռնաւորական շրջանի վերջին տարիները,  
Օսմ. Սահմանադրութեան հաչակումը, յեղափոխական-  
ներու արշաւանքը, մարտ 31ը, հականոսանքը յեղափո-  
խականներու դէմ, ևն. ևն. բոլոր այս մօստւոր ան-  
ցեալը կը վերակենդանանար, հոգի ու չոնչ կ'առնէր  
Դողմա էֆ.ի նամակներուն մէջ: Հայ վաճառականին, հայ  
պուրզուային խիզն էր որ կը խօսէր, կը պատգամէր,  
կը վճաէր անվերապահօրէն, անկեղծօրէն, աղատօրէն:

Այդ նամակները ամբողջութեամբ հրատարակել  
անպատշաճ պիտի ըլլար, մանաւանդ որ անոնց մէջ  
կային շատեր որոնք զուրկ էին ու է շահեկանութենէ:  
Հարկ էր ընտրանոք զտել, կարգի զնել, երբեմն կրծա-  
տել և երբեմն աւ լեզուական սրբագրութիւններ ընել:

Հէմա որ այս աշխատութիւնը աւարտած է, կը  
փութամ այս շահեկան նամակները ներկայացնել  
ՄԱՆԱԿԱՅԻ ընթերցողներուն և կը յուսամ որ հա-  
ճոյքով ու հետաքրքրութեամբ պիտի կարդացուին:

Անոնց ընթերցումը կը յանձնարարեմ մասնաւո-  
րաբար այս պուրժուայի ձագերուն որոնք վճարաբար  
միտքերնին դրած են «կատարեալ մորդ» ըլլար:

## Ա. ՆԱՄԱԿ

### ԳՈԶՄԱ ԱՐ ՄԻՀՐԱՅ

Սիրելի զաւակս՝ Միհրանիկ

ի Ժընեվ

Կը հաստատեմ 1905 դեկտ. 25 թուակիր յանձնա-  
բարեալ նամակս որով ներփակ զրկեցի 300 ֆր., 200ը  
իբրև յունուարի ամսական և 100ն ալ կաղանդի բա-  
ցառիկ ծախքերուդ համար: Կը յուսամ որ ժամանա-  
կին ստացած կ'ըլլաս: Ընդունեցի քու 1905 դեկտ. 27  
թուակիր նամակդ և ամէնքս ալ շատ ուրախ եղանք  
որ առողջ ես ու գասերուդ կ'աշխատիս:

Կը գրես թէ Ժընէվի օդը շատ աղէկ եկած է քե-  
զի. աւելի լաւ: Այսու հանդերձ միշտ առողջութեանդ  
հոգ տա՛ր, գիշերները շատ դուրսը մի՛ մնար և կտ-  
նուխ սենեակդ գնա՛, ասով թէ՛ անձդ կը ինսամենս և  
թէ աւելորդ ծախքեր չես ըներ ու գէշ ընկերներու  
հետ յարաբերութիւն չես հստատեր:

Մասնաւորապէս զգուշացիր վատնդաւոր անձերու  
հետ տեսակցելէ: Կը հասկնաս թէ ի՞նչ ըսել կ'ուզեմ: Դուն հոգ ազատ երկրի մէջ կ'ապրիս, բայց մենք հոս  
այնպէս չենք, մեր կացութեւնը լսւ գիտես: Եթէ  
անխոհեմութիւն մը ընես փորձանքը մենք կը կրենք: Գիտեմ որ դուն քիչ մը աարբեր գաղափարներ ունիս,  
բայց պէտք է հրաժարիս անոնցմէ: Դասերէդ զատ ու-  
րիշ բանի վրայ պէտք չէ որ մտածես: Նախ ջանա՛  
կատարեալ մարդ ըլլալու, ինքինքիդ համար աշխա-  
տելու, ասով ազգիդ համար ալ աշխատած կ'ըլլաս:  
Ինքինք չսիրողը ուրիշներն ալ չկրնար սիրել. առաջ  
անձդ՝ ետքը ուրիշները: Այս խրատները կուտամ՝ ո-  
րովհետեւ վերջին նամակիդ մէջ բաներ մը գրած էիր  
որոնք շատ հաճելի չթուեցան ինձի: Ի՞նչ պէտք ու-  
նիս վարժարանէդ գուրս ուրիշ զասախօսութիւններու

ալ յաճախելու : Կատարեալ մարդ ըլլալու համար քեզի կը բաւէ Առեւտրական վարժարանին ընթացքը տարատել : Սիրելի Միհրանիկս, այս ըսածներուս աղէկ ուշադրութիւն ըրէ :

Կալանդի առթիւ մեղի ուղղած չնորհաւորութիւններդ մեծ համոյքով կարդացինք: Շատ գոհ եմ որ մեղ միշտ կը յիշես ու չես մոռցած ընտանեկան յարկը :

Այս առթիւ պզտիկ գիտողութիւն մը ունիմ ընեւիք. նտմակդ կը վերջացնես սա բառերով. «Բիւր համբուրներ քեղի, մայրիկիս ու քոյրերուս»: Այդ տողերուդ մէջ, թերեւս ըսելիքս գարմանալի երեւայքեղի, ես տեսակ մը շայլութիւն կը նշմարեմ: Բիւր համբոյր չափազանց չէ միթէ, կընայիր գրել «Ամէնք սիրով կը համբուրեմ»:

Հիմա պիտի ըսես թէ ի՞նչ տարօրինակ գիտողութիւններ կ'ընեմ: Բայց այնպէս չէ: Ես ալ քիչ շատ կարդացած, կեանքն ու մարդիկը ուսումնական եմ, և գիտեմ մէկ բառով մէկու մը նկարագիրը հասկնալ:

Ինչպէս զրամը նոյնպէս զգացումներն ալ խնայութեամբ գործածել պէտք է որովհետեւ վերջիններն ու շայլութեան չեն կրնար գիմանալ ու կը սպառին: Եթէ այս տարի ամէն անգամ «համբոյր» զրկես մեղի, թերեւս գալ տարի հատ մըն ալ չկրնաս զրկել: Զափաւորութիւն ամէն բանի մէջ, սիրելի Միհրանիկս, ասով կարելի է միայն կատարեալ մարդ ըլլալ:

Կը յուսամ որ այս դիտողութիւններուս համար չես վշտանար գիտնալով որ քու օգտիդ համար է որ կ'ընեմ: «Բիւր համբոյր»ը անշուշտ գրչիդ տակ եկած խօսք մըն էր, բայց միեւնոյն տաեն նկարագիրդ կը մատնէր: Խնայողութեամբ տուր համբոյրներդ, նոյնիսկ նամակներուդ մէջ:

Այս տարի քու բացակայութեանդ պատճառու կազմանդը շատ ուրախ չանցուցինք, մայրդ մանաւանդ միշտ քեզ կը յիշէր: Բայց ես կը միսիթարուէի խորհելով որ

քանի մը տարիէն վկայականդ տռած պիտի գաս և ինձի թև ու թիկունք պիտի ըլլաս և քեզի համար մինչեւ այսօր ծախսած դրամս չպիտի կորուի պարապ տեղը:

Մայրդ, Մելինէն ու Արաքսին սիրով կը համբուրեն քեզ: Եւ ես ալ ճակատդ կը համբուրեմ:

Կ. Պոլիս, 8 Յունիուար 1906

Հայրդ՝ ԳՈԶՄԱ

## Բ. ՆԱՄԱԿ

ԳՈԶՄԱ ԱՌ ՄԻՀՐԱՅ

Միրելի զաւակս Միհրանիկ

Կը հաստատեմ վետրուար 24 թուակիր նամակս: Ստացած եմ քու մարտ 8 թուակիրդ և պարունակութեանը տեղեկացած: Առողջ ըլլալուդ լուրը մեզ շատ ուրախացուց, բայց միւս կողմէ քու մասիդ կարդ մը տեղեկութիւններ առի Սիմոնիկ ազայէն որոնք շատ տրամեցուցին և մտասանջութեան մէջ ձգեղին զիս: Սիմոնիկ ազայէն ես ինդրած էի որ ժընեվէն անցած ասենը քեզ տեսնէ և քու մասիդ մեզի տեղեկութիւններ բերէ: Ինքն ալ առանց այդտեղ մտանաւոր գործ մը ունենալու 3-4 օր աւելի մնացեր է հոդ: Դուն փոխանակ գոհ և չնորհակալ ըլլալու՝ կը գրես որ իր տեսակցութենէն ձանձրոյթ զգացեր ես ու զինքը «հին խաֆալը պարապ մարդ» կ'անուանես: Զե՞ս գիտեր որ Սիմոնիկ ազան մեր տանը մտերիմ բարեկամն է, քեզ ալ շատ կը սիրէ ու ասկէ զատ իրեն հետ գործ ալ ունիմ: Այսօրսւան օրս հրապարակին վրայ կարեւոր գիրք մը գրաւած է ու 40-50 հազար ոսկիի տէր մարդ է, ինչպէս ատանկ մարդու «հին խաֆալը պարապ մարդ» կ'ըսես: Իրմէ իմացայ որ այդտեղի վասնգաւոր մարդիկներու հետ կը տեսնուիս եղեր: Քեզի՝ թէ գացած տաենդ և թէ նամակներովս խրատեցի որ այդ վասակար մարդերէն հեռու փախչիս, որպէսզի մեր

գլխուն փորձանք չբերես, ինչո՞ւ իմ խորհուրդիս չես  
հետեւիր:

Այդ տեսակ յարաբերութիւնները ո՞չ թէ միայն  
մեզի՝ այլ քեզի ալ կրնան վասակար ըլլալ. Արդէն  
ատոր ապացոյցն ալ կը տեսնուի կոր վերջերս գրած  
նամակներուդ մէջ: Մարտ 8 թուակիրիդ մէջ կը գրես  
թէ «Ես իտէլի գաղափարական մարդ ըլլալ կ'ուզեմ.  
ինձի համար դրամը կամ հարստութիւնը միջոց մըն է  
և ո՞չ թէ նպատակ մը» են. առ ի՞նչ տեսակ անձոննի  
խօսքեր են: Եթէ քու առեւտրական վարժարանիդ մէջ  
կը սորվեցնեն կոր այդ բաները կը նախընտրեմ որ  
թողուս վարժարանը և հոս վերադառնաս որ իմ հըս-  
կողութեանս տակ և գործի մէջ լաւագոյն կերպով  
կրնաս ըմբռնել ու ճանչնալ կեանքը: Բայց ես շատ կը  
կասկածիմ որ այդ գատարկապորտ մարդերուն հետ  
տեսնուելով այս տեսակ խենթ ու խելառ գաղափար-  
ներ սկսար տւնենալ:

Մարդուս առաջին և մեծագոյն իտէալը իր փորը  
կշտացնեն է, յետոյ իր ընտանիքին ու զատակներուն  
փորը կշտացնել: Փորը անօթի մարդը ո՞չ իրեն, ո՞չ ի-  
րեններուն և ո՞չ ալ ալ իր հայրենիքին օգտակար  
կրնայ ըլլալ: Ամէն մարդու համար՝ իր բո՛ւն հայրե-  
նիքը փորն է: Երբ իր փորը փառաւոր մը կշտացուց՝  
հայրենիքը երջանիկ է: Եւ փորը կշտացնելու համար  
երկու միջոց չկայ՝ այլ մէկ, այն է դրամը: Այս որ  
ճշմարտապէս իր հայրենիքը կը սիրէ պէտք է դրամը  
սիրէ: «Արծաթը ամէն բանի բաւական է» կ'ըսէ Սո-  
զոմոն Իմաստուն: Շատ կը ցաւիմ, սիրելի զաւակս, որ  
այս ճշմարտութիւնները կ'ստիպուիմ քեզի կրկնելու:  
Դուն հիմա ասոնք գոյց գիտնալու և քու մտքիդ մէջ  
դրոշմելու էիր:

Ի՞նչ ըսել է «դրամը միջոց մըն է և ոչ թէ նպա-  
տակ մը»: Բանաւոր ու խելացի մարդու մը համար  
դրամ շահելէ ուրիշ ի՞նչ նպատակ կրնայ ըլլալ. Երազ-

ներով մարդս չի կրնար ապրիլ, աղաս: Այդ տեսակ  
երազներէն մարդ օր մըն ալ կ'արթնայ, բայց, ափ-  
սո՞ս, շատ ուշ. երբ ալ օգուտ չունի, երբ բանը բա-  
նէն անցած է:

Եթէ ես ժամանակին դրամ շահելու ետեւէ չըլլո-  
յի: հիմա ի՞նչ պիտի ըլլար քու վիճակդ: Հաշիւ ըրէ՝  
մէյ մը թէ ծաելէդ է վեր քանիի՛ բեռ եղած ես ինձի,  
և նոյնիսկ տակաւին չծնած: Որովհետեւ պատմած ենք  
քեզի թէ որչա՛փ նեղութեամբ մայրդ քեզ աշխարհ  
բերաւ: Բայցի գահնեկէն՝ երեք բժիշկ կար անկողնին  
գլուխը, որոնց ամէն մէկուն քսան ոսկի վճարեցի: Տետրակներուս մէջ գրուած են ասոնք: Յետոյ՝ դպրո-  
ցի, բժիշկի, գեղի, ուտելիքի, հագնելիքի, խաղալիքի,  
են. ելու ծախքերը եթէ մէկիկ մէկիկ հաշուենք, գի-  
տեմբս գումարը քանիի կը հասնի: Հիմա ատեն չունիմ  
տետրակներս աչքէ անցընելու, բայց եթէ մօտաւորա-  
պէս հաշուենք, վրայ վրայի տարեկան 80 ոսկի ծախ-  
սած եմ միայն քեզի համար, ինչ որ 20 տարուան մէջ  
կ'ընէ 1600 ոսկի, որուն տոկոսն ալ եթէ հաշուենք,  
քսան տարուան մէջ երեք հազար ոսկին կ'անցնի:

Այդ բոլոր ահազին ծախքերը սիրով ըրի ու աս-  
կէ ետքն ալ պիտի ընեմ այն յոյտով որ կատարեալ  
մարդ պիտի ըլլաս և օր մը պիտի կրնաս քեզի համար  
եղած ծախքերը տամասապատիկ հատուցանել, ո՞չ թէ  
ինձի, այլ քեզի ու քու զաւակներուդ: Եւ ահա՛ հիմա  
կը տեսնամ որ սիրալ ճամբաններու կը հետեւիս, գէց  
գաղափարներու կը ծառայես:

Սիմոնիկ աղայի պատմութիւնները շատ տագ-  
նապեցուցին զիս: Ի՞նչո՞ւդ պէտք քեզի չվերաբե-  
րած բաններու կը խառնուիս: Միթէ կը կարծես որ օգ-  
տակար բանե՞ր են ատոնք, կամ ապագային օգուտ մը  
կրնայ ծագիլ: Հոգհակառակը, մեր կրած բոլոր փոր-  
ձանքները միթէ այդ մարդոց ըրածներուն հետե-  
ւանքը չե՞ն:

Քեզի բացարձուկ կերպով ըսեմ որ այդ վատանգու-  
ւոր մարդիկը Պոլտէն հեռացուելէն ի վեր, փա՛ռք Աս-  
տուծոյ շա՛տ հանգիստ ենք: Աղօւոր քէրիթերնիս կ'ը-  
նենք, կ'ուտենք կը խմենք, կը զրօննունք, նեղու-  
թիւն մը տուող չիկար, դրամ ալ կը շահինք, վերջու-  
պէս ամէն աղաւութիւն ունինք:

Խելօք, հանդարա մարդուն ո՛չ մէկը կը դպչի: Ե-  
թէ լսես որ այսինչը կամ անինչը բանտարկուեր է:  
դիտցած եղիր որ անպատճառ յանցանք գործած է:  
ինչո՞ւ ինծի դպչու ըլլար դոր, որովհետեւ խոհեմու-  
թեամբ կը շարժիմ, ինծի չվերաբերած բաներուն մէջ  
չեմ մտնար, գործս կը նայիմ և առնս մէջ եկիմս կ'ընեմ:

Ես քեզի առատ առատ դրամ կուտամ կոր որ թէ՛  
վարժարանդ յանձնիս և թէ անմեղ հաճոյքներէ չըլլր-  
կուիս, եթէ զրկածս քիչ է գրէ՛ որպէսզի աւելի զըր-  
կեմ, միայն թէ, ի սէր Աստուծոյ, սա անպիտան մար-  
դերէն հեռու փախի՛ր: Հակառակ պարագային պիտի  
ասիպուիմ քեզ ֆընէվէն հեռացնել և ուրիշ տեղ մը  
զրկել ուսմունքը շարունակելու համար:

Մայրդ ալ չատ վշտացաւ Սիմոնիկ աղային ըսած-  
ները լսելով: Կ'երեւայ որ իր տուած հայրական իր-  
բատներուն հակառակ պատասխաններ տուած ես ու  
հետը վիճաբաններ ես: Կը վայելէ՞ ասիկա: Դուն որ  
տակաւին կեանքիմ մէջ տասը փարա չես վաստկած՝  
ինչպէս կրնաս հակառակախօսիլ մարդու մը որ ինքն-  
ոգնութեամբ 40-50 հազար ոսկիի տէր եղած է այսօր:

Անգամ մըն ալ կը խրատեմ, սիրելի Միհրանիկս,  
որ խելքդ գլուխդ ժողուես ու հրաժարիս խենթ ու  
խելու գաղափարներէ:

Ամէնքս սիրով կը համբուրենք քեզի: Աստուծով  
քիչ օրէն բարի լուր մը պիտի տամ Մելիսէի մասին,  
բայց այժմ չեմ ուզեր բան մը գրել, քանի որ վերջ-  
նական չէ խնդիրը:

Հայրդ՝

ԳՈԶՄԱՆ ԴԱՄԻԱՆՈՍԵԱՆ

## Գ. ՆԱՄԱԿ

### ԳՈԶՄԱՆ ԱՐ ՄԻՀՐԱՅՆ

Սիրելի զաւակս՝ Միհրանիկ

Ստոցայ ապրիլ 16 թուականով գրած նամակդ և  
կը փութամ անմիջապէս պատասխանելու, որովհետեւ  
շատ ծանրակշիռ կացութեան մը մէջ կը գտնուիմ  
քու պատճառովդ: Եթէ այսպէս շարունակուի՛, պիտի  
ստիպուիմ քեզ ֆընէվէն հեռացնել և ուրիշ քաղաք  
մը զրկել ուսմունքդ աւարտելու համար, այնպիսի  
քաղաք մը ուր հայ չգտնուի և կարենաս վտանգաւոր  
մարդերէ հեռու, խելքդ գլուխդ աշխատիլ:

Հիմա կ'աղաչեմ որ խորին ուշադրութեամբ կար-  
դաս գրելիքներս և յետոյ աւոնց համեմատ քու ըն-  
թացքդ ուղղես:

Երկու օր առաջ ոստիկանութեան նախարարէն  
հրաւէր ստոցայ երթալ զինքը տեսնելու: Կրնաս երե-  
ւակայել թէ այս հրաւէրը որքան մտատանջութիւն  
պատճառեց ինծի: Թէև ես ինքոյնքիս վրայ վստան  
էի և խիղճս կատարելապէս հանդարա էր, այսուհան-  
դերձ անմիջապէս նախազգացում մը ունեցայ թէ  
խնդիրը քու չուրջդ կը դառնար և այս բանը զիս  
չսփազանց վրդովեց:

- Դուն զաւակ մը ունիս ֆընէվի մէջ:
- Այս՝ պատասխանեցի:
- Ի՞նչ կ'ընէ այնտեղ:
- Ռւասնող է Առեւտը. բարձրագոյն վարժարանը:
- Իրեն մտախն շատ գէշ տեղեկութիւններ առած  
ենք... ըստ նախարարը հետզհետէ ձայնը խստացնելով:
- Իմ զաւակս իր գտաերուն աշխատող լուրջ ե-  
րիտասարդ մըն է, պատասխանեցի, և երբեք չեմ կար-  
ծեր թէ գէշ ձամբու մը մէջ գտնուի:
- Քու զաւակդ պարզապէս յեղափոխականե-

րուն հետ միացած վեհափառ Սուլթանին դէմ կը դաւ-  
է, ըսաւ նախարարը:

Երբ յանկարծ այս խօսքերը արտասանեց շուարե-  
ցայ մնացի և չկրցայ անմիջապէս պատասխան տալ:

— Դուն տեղեկութիւն չունի՞ս, գոչեց փաշան,  
ծուռ ծուռ երեսս նախելով :

— Զէ՛, ըոի, բայց արդէն երբեք չեմ հաւատար  
որ իմ զաւակս ատանկ գործերու մէջ մտնէ:

— Հետը չե՞ս թղթակցիր:

— Դրեթէ ամէն շաբաթ:

— Ինչպէս կ'ըլլայ ուրեմն որ չես գիտեր թէ  
ինչ կեանք կը վարէ ժընէվի մէջ:

— Բայց, պատասխանեցի երբեք այդ տեսակ բա-  
ներու ակնարկութիւն ըրած չէ իր նամակներուն մէջ:  
Արդէն ես ալ իրեն բացարձակապէս արգիլած հմ  
գվրոցէն դուրս ո և է բանով զբաղելու:

Եւ գրպանէս հանելով քու գրած վերջին նամակը  
իրեն տուի ըսելով.

— Ահաւասիկ իր գրած նամակը որ երկու օր ու-  
ռաջ ստացայ, կրնաք տեմնել և համոզուիլ որ մէջը  
վտանգաւոր բան մը չիկայ:

Փաշան նամակը առաւ, քովը դրաւ և ըսաւ.

— Թող մնայ, որպէսզի թարգմանել տամ:

Յետոյ պահանջեց որ գրած միւս նամակներդ ալ  
իրեն յանձնեմ: Խոստացայ: Այն ատեն ձայնը քիչ մը  
մեզմացնելով, ըսաւ.

— Գոզմա էֆէնտի, մենք գիտենք որ զուն Սուլ-  
թանին և պետութեան հաւատարիմ մարդ մըն ես,  
պարկեշտ վաճառական մը որ միայն իր առեւտուրովը  
կը զբաղի, և ասոր համար կ'ուզեմ այս անդամ նե-  
րողամտութեամբ վարուիլ հետդ: Բայց եթէ իմանամ  
որ գտակդ դարձեալ այդ վտանգաւոր մարդոց հետ  
յարաբերութեան մէջ է, գիտցած ըլլաս որ մեծ փոր-  
ձանքներ կը բերեմ գլխուդ:

Խոստացայ պէտք եղածը իսկոյն գրել քեզի և  
վերադարձայ գրասենեակ յուզումէս գողահար: Զէի  
կարծեր որ այսչափ աժան պիտի կրնայի ողատիլ,  
բայց բարեխաղդարսը մինչև այսօր մաքուը ապրած  
եմ, երբեք վտանգաւոր ընթացքի մէջ չեմ գտնուած  
և առիթը ներկայացած ատեն հաւատարմութեանս ա-  
պացոյները տուած եմ: Այս պատճառաւ ահա՛ առաջին  
անգամի համար չափազանց խիստ չվարուեցան հետո:

Այս եղելութիւնը քեզ իմացնելով՝ կը խնդրեմ և  
կը պահանջեմ որ նամակս առնելուդ պէս ամէն յարա-  
բերութիւն խզես քու հայ ընկերներուդ և ծանօթնե-  
րուդ հետ, նոյնիսկ բարեւդ կտրես իրենցմէ: Հակա-  
կառակ պարագային՝ գլխուս փորձանք պիտի բերես,  
գիտցած եղի՛ր:

Թեղի քանի անգամ ըսած եմ որ վերացական բա-  
ներու ետեւէ չվազես, լուրջ, գործնական ու դրական  
մարդ ըլլաս: Թեթև մարդոց խօսքերուն պէտք չէ հո-  
ւատառ և վերացական գաղափարներու ետեւէ վազել:  
Գիտցած եղիր որ մենք հոս շատ հանգիստ ենք և գոհ  
մեր վիճակէն: Մեր մազին թելին գոչող անգամ  
չի կայ: Փա՛ռք Աստուծոյ, կ'ուտենք, կը խմենք, դրամ  
կը շահինք, ուզած ատենիս կը պառկինք, ուզած  
ատենիս կ'ելլենք, ալ ասկէ աւելի ի՞նչ կ'ու-  
զենք: Գաւառներուն վիճակը սանկ է եղեր նանկ է  
եղեր, մեզի ի՞նչ, մենք մեզի հոգանք: Արդէն գաւառը  
ի՞նչ ունի որ . . . ես միշտ առեւտրական յարաբերու-  
թիւներ ունիմ գաւառացի պատուաւոր վաճառական-  
ներու հետ, ամէնքն ալ գգգոհութիւն մը յայտնած  
չունին: Շարաթաններու խօսքին ականջ մի՛ կտիսեր,  
անոնք իրենց անձնական շահուն համար ապէտ տեսակ  
ձամբաներու կը հետեւին:

Դուն նայէ՛ որ ժամ առաջ կատարեալ մարդ ըլ-  
լաս, գործի սկսիս, դրամ շահիս, ուրիշ խնդրուխելառ  
բաներու համար միտքդ մի՛ յոգնեցներ: Եթէ գրամ

ունիս՝ աշխարհի ամենէն ազատ մարդն ես, եթէ դրամ  
չունիս՝ գերի ես ամենուն ձեռքը, աշխարհի որ կողմն  
ալ գտնուիս, որ երկրին մէջն ալ պարիս: Ազատու-  
թիւն, անկախութիւն, յեղափոխութիւն, տառնց ամենքն  
ալ դրամն է: Դրամը չմիրողը ազատութիւնը չկրնոր  
սիրել:

Երջօրէն մտածէ՛ փորձառու մարդու այս խրատ-  
սերուս վըրայ:

Յիշէ՛ նախարարին սպառնալիքը և ըստ այնմ  
ուղղէ՛ ընթացքի:

Ամէնքս ալ սիրով կը համբուրենք քեզի: Քիչ օ-  
րէն Մելիքն պիտի նշանենք պատուաւոր և հարուստ  
վաճառականի մը հետ: Այս մասին աւելի մանրամասն  
կը գրեմ յաջորդով:

Հայրի՝ ԳՈԶՄԱ



## Դ. ՆԱՄԱԿ

ԳՈԶՄԱ Ա. ՓԻԼԻՊՈՎՈՍ

Սիրելի բարեկամս Փիլիպոս եֆ.

ի Ռոտորո

Երկար ժամանակ է որ առիթ չէինք ունեցած ի-  
րարու հետ թղթակցելու, յորմէ հետէ մեր արմակիքի  
առեւտուրը դադրեցուցինք և սակայն ասիկա պատ-  
ճառ մը չէ որ մեր երկարամեայ բարեկամութիւնը  
գաղարի: Առեւտրական յարաբերութիւններէն դուրս,  
մեր մէջը բարեկամական կազեր հաստատուած են և  
միշտ գրեթէ ձեր խօսքը կ'ընենք տանը մէջ: Ցաւալի  
է որ երկար ժամանակէ ի վեր չկրցաք Պոլիս գալ և  
ձեր ներկայութեամբը մեզ պատուել: Մեզի համար  
մեծ հաճոյք մը պիտի ըլլար ձեզի հիւրնկալելը և

պատուասիրելը: Կը յուսամ որ ողջ և առողջ էք ըն-  
տանեօք և դուք ալ փոխադաբար մեզ չէք մոռ-  
ցած: Կինս և աղջիկներս յատկապէս կը բարեւեն ձեր  
տիկինը և գաւակները:

Այս անգամ ձեզի կը գրեմ ոչ թէ առեւտրական  
գործի մը համար՝ այլ ընտանեկան խիստ փափուկ և  
կենասկան խնդրի մը մտախն և կը յուսամ որ պիտի  
բարեւածիք ձեր ձեռքէն եկած ծառայութիւնը մա-  
տուցաներ, որուն համար նախապէս կը յայտնեմ նոր-  
հակալութիւններս և երախագիտութիւնս:


Ահաւասիկ խնդիրը: Մեր Մելիքնէն կողենք նշա-

նել Թուչնակերեան Մարտիկ է-  
ֆէնտիին հետ, որ ինչպէս ծանօթ

է ձեզ, փայլուն գիրք մը կը  
գրաւէ Պոլսոյ հրապարակին վը-  
րայ: Բարեկամմ մը իր կողմէ  
միջնորդեց և մեր աղջկան ձեռ-  
քը խնդրեց. մենք ալ, մեր կող-  
մէ, անպատճութիւն մը չտե-  
սնք այսպիսի միութեան մը  
համար: Բայց և այնպէս Մար-  
տիկ էֆէնտի բնիկ Խօսուսոցի  
մը ըլլալով, իր և իր ընտանե-  
կան պարագաներուն մասին որոշ տեղեկութիւններ  
չունէինք:

Իրա՛ւ է որ հրապարակին վրայ պատուաւոր վա-  
ճառական մը նկատուած է և այս մտախն տարակոյս  
չկայ, բայց և այնպէս ամուսնութեան պէս կենասկան  
խնդրի մը մէջ հարկ էր նաև ուրիշ տեղեկութիւններ  
ալ քաղել իր մասին: Արդ, ասոր համար գիմում ըրի  
տեղմ գտնուած Խօսոսութոցի վաճառական բարեկամնե-  
րու: Դժբաղգաբար արուած տեղեկութիւնները հա-  
կասական էին, այնպէս որ այժմ կը ստիպուիմ ձեր  
աղջուութեան գիմել, խնդրելով որ յանուն մեր բա-

303 8-18



բեկամութեան և ամենայն անկեղծութեամբ ինծի իւ-  
մացունէիք ինչ որ գիտէք Մարտիկ էֆէնտիի մասին:  
Իմ քաղած տեղեկութիւններէս կ'երեւայ որ  
յիշեալը բաւական անախորժ անցեալ մը ունեցած է:

Նախ պատմեցին թէ Արտիկ էֆէնտի, տարիներ  
առաջ, այդտեղ ապօրէն յարաբերութիւններ ունեցած  
է եղեր կոյս աղջկան մը հետ, որմէ զաւակ մըն ալ  
ունեցեր է, և թէ ինք ստիպուեր է այդ պատճառաւ  
հեռանալ քաղաքէդ, աղջիկը երեսի վրայ թողլով:  
Խնդիրը իր այս վիճակին մէջ նշանակութիւն մը չու-  
նի անշուշտ և կարելի է վերագրել երիտասարդական  
թեթեւութեան, եթէ իրաւոնէ խելացութիւնը ունե-  
ցած է իր յարաբերութիւնները բոլորովին դադրեցնել  
աղջկան հետ, ծննդաբերութեան դէպքէն ետքը: Բայց  
դժբախտաբար մէկ քանիներ հաւասարեցին թէ գոր-  
ծը այդպէս չէ վերջացած և աղջկան բողոքներուն և  
սպանալիքներուն վրայ՝ Մարտիկ էֆէնտի ստիպուած  
է, թէ՛ աղջկան և թէ անոր զաւակին ամսական մը  
յատկացնել: Հոս է որ ահա՛ խնդիրը կը կնճռոտի և  
ապօգայ տաղտուկներու գուռ կը բանայ:

Կը խնդրեմ, սիրելի բարեկամ, որ այս մասին որոշ  
տեղեկութիւններ տաս և ձշմարտութիւնը ամբողջու-  
թեամբ ինծի յայտնես:

Յետոյ, ըսին նաև որ Մարտիկ էֆէնտի իր մթե-  
րանոցը ապահովագրել տալէ ետքը զայն այրած է և  
իրբե հրձիգ ամբաստանուելով բանտարկուած է բա-  
ւական ատեն, բայց վերջապէս կարելի եղած է զինքը  
աղտատելու, բաւական դրամ կերցնելով:

Ասիկա իրաւ է որ ամուսնութեան հետ ո և է կապ  
չունի և թէ նկատի առնուելիք բան մը չէ, այսու-  
հունդերձ կ'ուզեմ որ այս մասին ալ որոշ տեղեկու-  
թիւն մը ունենալ: Այդ տեսակ գործերը երբ չեն յա-  
թիւն ու երեւան կ'ելլեն՝ պատիւ չեն բերեր և ան-  
ջողիր ու երեւան կ'ելլեն՝ պատիւ չեն բերեր և ան-  
ջողակութեան ապացոյց են: Կատարեալ մարդ մը

մինչեւ որ բացարձակ վստահութիւն չունենայ իր յա-  
ջողութեան վրայ պէտք չէ այդպիսի վտանգաւոր  
ձեռնարկներու մէջ մտնէ: Իմ համոզումն այս է: Վա-  
ճառական մը իր պատւոյն պէտք է նախանձախնդիր  
ըլլայ ամէն վայրկեան ու իր վարկը միշտ բարձր պա-  
հէ: Դրամ շահելու համար ի հարկ է ամէն միջոց լաւ  
է, բայց պայմանաւ որ խաղաք չըլլանք. եթէ ո՛չ յե-  
տինն չար քան զառաջինն կ'ըլլայ:

Ոռոսսթօցիներ, գժմացայ նաև որ Մարտիկ է-  
ֆէնտի իր հորը հետքը և ուած և նոյնիսկ անոր վրայ  
գանակ քաշոծ է և իւն իւ այդ ցաւալի դէպքէն ի վեր  
ամէն յարաբերութիւններ է հօր և զաւկին միջն։  
Բնականաբար կ'ամի ք իրաւունք չունինք ընտանե-  
կան ներքին խնդիրներու խառնուելու: Թերեւս այդ  
գժտութեան մէջ հայրն ալ իր պատասխանառութեան  
բաժինը ունի: Ես կը փափաքիմ միայն հասկնալ թէ  
յարաբերութեան այդ խզումը, ապագային ի՞ո՞չ հետե-  
ւանքներ կրնայ ունենալ, զամ աւելի բաց խօսելով՝  
արգեօք հայրը իր զաւակը զրկած է ժառանգութենէ,  
ինչպէս որ բարեկամ մը ի ձ հաւասարեց:

Սյա կէտը ամենէն աւելի զիս կը չահագրգոէ և  
այս մասին կ'ուզեմ որ տեղեկութիւն մը տաք ինծի:  
Վերջապէս, — և տաիկո ամենէն կարեւորն է, —  
կը փափաքիմ Մարտիկ էֆէնտիի նիւթական կարգու-  
թեան մասին որոշ գաղափար մը ունենալ: Սյա նկատ-  
մամբ իմ քաղած տեղեկութիւններս չա՛տ հակասական  
են, այսպէս որ չուարած մնացած եմ: Ոմանք 15 - 20  
հազար ոսկիի հարսաւութիւն մը կը վերագրեն իրեն,  
ուրիշներ կ'ըսեն թէ 8 - 10 հազար ոսկի ունի միայն,  
նոյնիսկ ըսողներ կան որ հազիւ 4 - 5 հազար ոսկիի  
տէր է: Գտնուեցաւ նաև վաճառական մը որ ըսաւ  
թէ այդքան ալ դրամ չունի և թէ ամբողջ գործը  
վարկով կը դարձնէ:

Կը խնդրեմ, սիրելի բարեկամ, այս մասին ձեր

ամբողջ գիտցածը անկեղծօրէն յայտնեք ինձի. ամեւնէն կենաւկան խնդիրը այս է: Կ'ուզէի գիտնալ նաև հօրը նիւթական վիճակը ինչպէս նաև քանի մանչ և քանի աղջիկ ունենալը:

Իմ լսածիս նայելով՝ Մարտիկ էֆէնտիի մայրը անբարոյական վարմունք մը ունեցած է եղեր և իր ամուսնէն երկար տարիներէ ի վեր բաժնուած՝ առանձին կ'ապրի եղեր. Այս կէտը թէև բնաւ նշանակութիւն չունի, այսուհանդերձ զը վափաքէի իբոզութիւնը իմ անաւ:

Ինչպէս կը տեսնէք ձենէ խնդրութիւնս մեծ բան մը չէ և վասահ եմ որ պիոի համիշապէս ուղած տեղեկութիւններս բ'ա հազորդել: Մարտիկ էֆէնտի կը փափաքի որ չուտով նշանտուքը կատարենք, որովհետեւ մօտերս գործով Եւրոպա պիտի երթայ քիչ մը ժամանակի համար և չուզեր որ խընդիրը իր վերադարձին մնայ:

Կընաք ապահով ըլլալ որ ձեր հազորդելիք տեղեւ կութիւնները բոլորովին գաղտնի պիտի պահուին և երբեք չպիտի գիտցուի անոնց ազբիւրը, այս մասին պատւոյս վրայ խօսք կուտամ:

Դուք որ աղջիկ զաւակներու տէր էք, գիտէք թէ ինչ գիտուարին բան մըն է այսպիսի ամուսնական խնդիր մը և որչափ աչուրջութիւն հարկաւոր է յետոյ գժրախտութիւններու չհանդիպելու համար:

Երա՛ւ է որ դրամն ու հարստութիւնը շատ բաներ կրնան ծածկել, բայց գոնէ այդ նիւթական ապահովութեան մասին պէտք է որ որոշ գաղափար մը ունենանք: Եթէ իրա՛ւ, Մարտիկ էֆէնտիի հայրը վճռած է իր որդին ժառանգութենէ զրկել, խնդիրը շատ կը գժրախտանայ: Այս մասին մանաւանդ ձենէ կը սպասեմ ամենաձշգրիտ տեղեկութիւններ: Կենաւկան հարցը այդ է:

Սիրալիր բարեւներ ձեր ազնիւ տիկնոջ և սիրասուն զաւակներուդ ինչպէս նաև ձեր ազնուութեան:

Զեր անկեղծ բարեկամը՝  
ԴՌԶՄԱ. ԴԱՄԻՍՆՈՍԵՍՆ



## Ե. ՆԱՄԱԿ

ԳՈԶՄԱ ԱՌ ՓԻԼԻՊՊՈՅ

Սիրելի բարեկամս Փիլիպպոս Էֆ.

ի Ռոտորօ

Շատ շնորհակալ եմ որ բարեհաճեցաք նամակիս չուտով պատասխաննելու և ձեր թանկագին տեղեկութիւններովը զիս լուսաբանելու: Զեր այս բարեկամական արտօքը երբեք չպիտի մոռնամ, պիտի ջանամ զայն փոխարինել առաջին առթիւ:

Զեր նամակը ստանալէ անմիջապէս ետքը մեր ուրոշումը առուինք և Մարտիկ էֆ.ին ալ հազորդեցինք և վաղը, հինգշարթի, նշանառուքը պիտի կատարենք մեր բնակարանին մէջ: Շատ կը փափաքէի որ դուք ալ ձեր ազնիւ ընտանիքով ներկայ ըլլայիք այս ուրախ հանդէսին: Ամէն պարսպային՝ վատոհ եղիր որ ձեզ պիտի յիշենք:

Կը գրէք թէ մօտ օրերս Պոլիս պիտի գաք: Այժմ մէն իմաց կուտամ ձեզի որ մեր տունը հիւր պիտի մնաք և եթէ այնպէս չընէք ու ո և է պանդոկ մը երթալ ուզէք, գիտցէք որ խորապէս պիտի վշտացնէք թէ՛ զիս և թէ՛ կիս:

Զեր տուած տեղեկութիւններուն մէջ ինձի համար կարեւորագոյնը այն է որ Մարտիկ էֆ.ի հայրը

զայն ժառանգութենէ չէ զրկած եղեր և թէ ինքն առ  
20 - 25 հազար ոսկի հաստատ հարստութիւն մը ունի:

Կը գրէք նաև որ մեր խնամիցուն, Մարտիկ  
էֆ. զատ մանչ մը և երկու ամուսնացած աղջիկներ  
ունի Այս ալ թանկագին տեղեկութիւն մըն է, որով-  
հետեւ եթէ 3 - 4 մանչ ունենար, իր մահուան պարա-  
գային մեծ բան մը չպիտի մնար մեր փեսին:

Որքան ալ ձեր տուած տեղեկութիւնները գոհա-  
ցուցիչ էին՝ միւս կողմէ ձեր գրուածքէն անանկ մը  
կը հասկցուէր որ շատ համակարծիք չէք մեր Մելի-  
նէն թռչնակերեան էֆէնտիի հետ ամուսնացնելու մեր  
ծրագրին:

Մարտիկ էֆ.ի մասին բաւական աննպաստ ծանօ-  
թութիւններ կուտաք, ինչպէս իր խաղամոլութիւնն  
ու գինեմոլութիւնը: Այդ մասին ուրիշներն ալ խօ-  
սած էին ինձի, բայց ես չուզեցի ձեզ գրել, ինչպէս  
նաև իր ցասկոտ բնութեանը մասին, որովհետեւ ձըշ-  
մարիտը խօսելու համար, ես ատանկ բաներու շատ  
կարեւորութիւն չեմ տար: Երբ մորդ դրամ ունի  
այդ պղտիկ թերութիւնները տչքի չեն զարներ: Ուր  
գտնելու է կատարելապէս առաքինի մարդը:

Խաղամոլութիւն, գինեմոլութիւն, բարկութիւն,  
ևն, անանկ թերութիւններ են, որոնք քանի տարի-  
ները անցնին կը պակսին ու կը մեղմոնան, մինչդեռ  
դրամը առաքինութիւն մըն է, որ տարիներու ըն-  
թացքին հետզհետէ կ'ածի, բազազրեալ տոկոսի դրու-  
թեամբ:

Գալով անբարոյական աղջկան ու իր դաւկին՝ կը  
գրէք որ Մարտիկ էֆ. կանոնաւորապէս վեց ոսկի  
ամսական կը վճարէ իրենց: Ասիկա, շիտակը, շատ  
տարօրինակ երեւցաւ ինծի: Վայրկենական յիմարու-  
թեան մը համար միթէ խելացութիւն է տեւական  
վճարում մը ընել: Գրտիան ու կատարեալ մարդու  
գործ չէ այդ: Ես որոշած եմ նշանաւուքէն ետքը այս

մասին խօսք բանալ Մարտիկ էֆ.ին և վերջնական  
կարգագրութեամբ մը այդ գործը լինցնել: Նախ պի-  
տի պահանջեմ, որ ամսականը դադրեցնէ անմիջապէս:  
Այդ տեսակ յանձնառութիւն մը ապագային կրնայ  
մեծամեծ տաղտուկներ պատճառել: Պէտք է ուրիշ ձև  
կարգագրութիւն մը ընել և այս մասին ես արդէն  
խորհած եմ:

Նախ կրնանք տղան ի հօրէ և ի մօրէ որբ հոռ  
փոխագրել և Հիւմնդանոցի որբանոցը դնել: Հոգա-  
բարձութիւնները իմ բարեկամներս են ու միջոցը  
կրնամ գտնել ձրիաբար զայն Ս. Յակոբ գնել տալու:  
Գալով աղջկան՝ կարելի է զայն մէկու մը հետ կար-  
գել այդտեղ գումար մը տալով իր ապագայ էրկանը:  
Փոխանակ Մարտիկ էֆ.ն մշտնջենապէս ամսական վեց  
ոսկի վճարելու՝ թո'զ մէկ անգամէն 80 - 100 ոսկի  
տայ իբրև օժիտ և գործին մէջէն ելլէ: Կարծեմ այդ-  
քան գումարով մը աղջիկը կրնայ մէկը գտնել և հե-  
տը ամուսնանալ: Այս կերպով խնդիրը միանգամ ընդ  
միշտ կը փոխուի: Բայց որպէսզի կարելի ըլլայ այս  
արդիւնքին համնիլ: Նախ և առաջ ամսականը դադ-  
րեցնելու է: Որչով ատեն որ Մարտիկ էֆ. յիմարու-  
թիւն ընէ այդ դրամը տալու, անկարելի պիտի ըլլայ  
իմ ծրագիրս գործադրել: Կը յուսամ որ դուք ալ,  
իբրև գործնական մարդ, այս գրածներուս հաւանու-  
թիւն պիտի տաք: Կը ինդիրեմ որ ձեր կարծիքը  
յայտնէք: Չեր տուած բացատրութիւններէն ետքը,  
միակ ու կէտը այդ աղջկան խնդիրն է ինձի համար:

Սիրալիր բարեւներ ձեր աղնիւ տիկնոջ և սիրա-  
սուն զաւակներուդ, ինչպէս նաև ձեր աղնուութեան:

Չեր անկեղծ բարեկամը՝  
ԴԱԶՄԱՆ ԴԱՄԻԱՆՈՍԵԱՆ

## Զ. ՆԱՄԱԿ

### ԳՈԶՄԱ ԱՌ ՄԻՀՐԱՅՆ

Սիրելի զաւակ՝ Միհրանիկ

ի Ժընէվ

Կը հաստատեմ ապրիլ 24 թուակիր նամակս։ Բատացայ քու ապրիլ 28 թուակիրդ և շատ ուրախ եղայ տուած տեղեկութիւններէդ։ Գոհ եմ որ գրածներս իրենց ազգեցութիւնը գործած են վրադ և յարաբերութիւններդ բոլորովին խզած ես վտանգաւոր անձերու հետ ու դասերուդ կ'աշխատիս։ Ուրախ եմ նաև որ զուիցերիսցի ընկերներու հետ յարաբերութիւն հաստատած ես ու անոնց ծնողքներուն տունները կը յաճախես։ Ատիկա շատ աւելի աղէկ է քան սրճարանները ժամանակ անցնելը։ Միայն թէ միշտ խոհեմութեամբ վարուէ և չափազանց մտերմութիւններ մի՛ մշակեր։



Ինչպէս գրած էի արդէն, երկու օր առաջ քոյրդ Մելինէն նշանեցինք Ռոտոսթօյի ծանօթ վաճառական Մարտիկ էֆ. Թըռչնակերեանի հետ։ Մարտիկ էֆէնտի ազնիւ ձիրքերով օժտուած երիտասարդ մըն է, որ Պոլսոյ հրապարակին վրայ պատուաւոր գիրք մը գրաւած է։ Հայրն ալ Ռոտոսթօյի մէջ փայլուն գիրք մը ունի։ Իմ քաղաք ստոյդ տեղեկութիւններուս նայելով 20-25 հազար ոսկիի հաստատ հարստութեան տէր մէկն է եղեր և Մարտիկ էֆ.էն զատ միայն մէկ մանչ և երկու ամուսնացած աղջիկ ունի։

Ծատ ցաւ զգացինք որ այս նշանառութին դուն ալ ներկայ չկրցար գտնուիլ։ Մօտերս Մարտիկ էֆ. իր առեւտրական գործերուն համար Եւրոպա պիտի այցելէ և Փընէվին ալ պիտի անցնի ու քեզ տեսնէ։ Անշուշտ պէտք եղածին պէս կը պատուես զինքը։ Առ այժմ ուրիշ կարեւոր գրելիք մը չունիմ։

Ամէնքս սիրով կը համբուրենք քեզի։

Հայրդ՝ ԳՈԶՄԱ

## Է. ՆԱՄԱԿ

### ԳՈԶՄԱ ԱՌ ՄԻՀՐԱՅՆ

Սիրելի զաւակ՝ Միհրանիկ

Կը հաստատեմ 1908 մայիս 3 թուակիր նամակս։ Երկու օր առաջ քրոջդ՝ Մելինէին նշանածը ճամբայ գրինք գէպի Եւրոպա։ Քանի մը օր Վիէննա մնալէ ետքը, ուզզակի Փընէվ պիտի գայ քեզ տեսնելու։ Այս առթիւ ներփակ 200 ֆրանքնոց պանքնօթ մը կը զրկեմ որպէսզի կարենաս զինքը պէտք եղածին պէս պատուամիրել։ Աւելուրդ ծախքեր ընելու պէտք չունիս, միայն կը փափաքիմ որ զինքը մէկ քանի անգամ ճաշի հրաւիրես ու թատրոն տանիս։

Ինք կ'ըսէ որ առեւտրական կարեւոր գործերու համար Զուիցերիայէն պիտի անցնի։ Ճանա՛ համկնալ թէ ինչ տեսակ գործեր են առոնք և ինծի տեղեկացուր։ Եթէ պէտք ըլլայ քու աջակցութիւնդ ալ մի՛ խնայեր իրեն։ Մարտիկ էֆէնտին կատարեալ գործի մարդ մըն է և մեծ ապագայ կը խստանայ, միայն թէ քիչ մը երիտասարդական մոլութիւններ ունի որոնցմէ անշուշտ պիտի հրաժարի երբոր ամուսնանայ, արդէն նշանուելէն ի վեր օրինակելի կեանք մը կը

վարէ, ինչ որ մեծ ուրախութիւն կը պատճառէ ամենուս: Սակայն կ'ուզէի գիտնալ նաև որ մենէ հեռու թնչ տեսակ վարք ունի և ասոր համար կուզեմ որ գոնէ ժընէվ գտնուած միջոցին, առանց յայտնի ընկու հետամուտ ըլլաս տեղեկութիւններ քաղելու: Կարծեմ դժուար բան մը չէ ասիկայ քեզի համար, միայն թէ ինք կասկածի երթալու չէ: Խնդիրը քրոջդ երջան կութեան վրայ է և ասոր համար պէտք է որ դուն ալ քու ձեռքէդ եկածը ընես:

Այս օրերս դարձեալ խստութիւնները շատ աւելցած են Պոլսոյ մէջ և բազմաթիւ ձերբակալութիւններ կ'ըլլան, թէև պարկեշտ ու պատուաւոր մարդոց գըպչող չիկայ: Կ'ըսուի թէ կարգ մը բախտախնդիր դատարկապորտներ եկած են Եւրոպայէն և կ'ուզեն նորէն բաներ մը ընել Պոլսոյ մէջ, իբր թէ մինչեւ հիմա իրենց ըրածները չեն բաւեր: Երբ այս յիմարութիւններուն վերջ պիտի տրուի...: Այս պակասամիտ յեղափոխականները չեն կրնար կոր ըմբռնել թէ ազդ մը միայն վաճառականութեամբ կրնայ յառաջդիմել, զօրոնալ ու բարգաւառնիլ և վաճառականութեան համար ալ հանդարասութիւնը անհրաժեշտ է: Քանի մը հոգիի գործած տղայական յիմարութիւնները ուրիշ արդիւնք չեն ունենար՝ այլ առեւտրական յարաբերութիւնները դժուարացնել: Առոնց երեսէն չէ որ Անատօլուի հետ մեր վաճառականութիւնը գրեթէ գաղրած է բոլորովին: Հայերը չեն կրնար ճամբորզել և հետեւաբար առուառը ընել: Ո՞վ կ'օգտուի ասկէ. պարզապէս Յոյները կամ Հրեանները: Ահա մեր յեղափոխականներուն տեսած գործը: Հայերը մինչեւ հիմա վաճառականութեամբ ապրեր են ու ասկէ ետքն ալ իրենց համար ուրիշ ասպարէզ չիկայ: Այս ճշմարտութիւնը չեն կրնար կոր հասկնալ:

Այս բաները կը գրեմ քեզի որպէսզի միշտ զգոյշ ըլլաս և ուղիղ ճամբէն չեղիս: Ամենափոքրիկ անխո-

հեմութիւն մը կրնայ մեծ փորձանքներ յառաջ բերել, մասաւանդ այս միջոցիս: Վստահ եմ որ գրածիդ պէս միշտ կը շարունակես հայերէն հեռու ապրիլ: Եւրոպացիներու հետ բարեկամութիւն հաստատէ որչափ որ կ'ուզես, անկէ վնաս առաջ չիգար՝ այլ ընդհակառակը կ'օգտուիս:

Ամէնքս սիրով կը համբուրենք քեզի: Նամակներդ անպակաս ըրէ՛:

Հայրդ՝ ԳՈԶՄԱ

## ԸԱՄԱԿ

ԳՈԶՄԱ ԱՌ ՄԻՀՐԱՆ

Միրելի զաւակս՝ Միհրանիկ

Կերջին նամակգ, մայիս 21 թուակիր, զոր երէկ իրիկուն ստացայ, չոփազանց յուզեց զիս: Տուած տեղեկութիւններդ այնքան անախորդ էին, որ չուզեցի կարդալ ոչ մօրդ և ո՛չ ալ քրոջդ:

Կը յուսացի որ Մարտիկ էֆէնտափ, զոնէ քու մօտք, աւելի խոհեմ ընթացք մը պիտի ունենար: Գինովութեան պարուղան և այդ առթիւ երգեցիկ սրճարանին մէջ տեղի ունեցած կուրէ և ոստիկանական միջամտութիւնը ծշմարիտը շատ ցաւալի բան է: Բարեբախտաբար զինքը ճանչցող չիկայ այդտեղ և ոչ ոք գիտէ մեր փեռացուն ըլլալը: Տուած ուրիշ մանրամասնութիւններդ ալ շատ ամօթալի են: Լաւ ես ըրեր որ մերժեր ես իրեն ընկերանալու իր գաղած տեղերը:

Ի՞նպէս կ'ըլլայ որ նոր նշանուած մարդ մը, իր նշանածին եղբօրը կ'առաջարկէ այդ տեսակ պտոյտներ: Առով պարզապէս անխոհեմութեան և անխելքութեան ապացոյցը տուած կ'ըլլայ. կ'երեւայ որ գինովութեան մէջ ըրածը թողածը չէ գիտցեր: Գոնէ իր

մոլութիւնները ծածկել գիտնար պէտք եղած տեղը:  
Վաճառականի մը վարկին ու համբաւին համար որ-  
քան վնասակար են այս տեսակ ընթացքները: Եթէ  
գիտնայի որ ասանկ բաներ պիտի պատահէին՝ զինքը  
կը համոզէի ժընէվէն չանցնելու. դոնէ այդ կերպով  
դուն չէիր տեսներ իր ընթացքը և մենք ալ չէինք  
իմանար:

Ամենէն տւելի ինծի վիշտ պատճառով պարագան  
առ եղաւ որ շաբաթ մը ժընէվ կեցեր է առանց եր-  
բեք և է գործով զբաղեցու: Ուրեմն սուտ ըստ  
ինծի թէ այդանդ կարեւոր գործեր ունէր կարգա-  
դրելիք: Յաւալի՛, շատ ցաւալի բան:

Խորհուրդ կուտաս նշանտուքը ետ ընելու, բայց  
շատ զժուար բան է ատիկա, մանաւանդ որ հիմա յա-  
րաբերութիւն հաստատեցինք իր հօրը հետ որ շատ  
պարկեշտ ու պատուաւոր մարդ մըն է և մեծ համա-  
կրանք ցոյց կուտայ մեղի հանդէպ:

Քանի մը օր սաւաջ Պոլիս եկաւ և մեղի հիւր ե-  
ղաւ: Շատ ուրախութիւն յայտնեց որ իր տղան մեղի  
պէս ընտանիքի մը մէջ պիտի մտնար:

— Հիմա յոյս ունիմ որ ձեր չնորհիւ կատարեալ  
մարդ պիտի ըլլայ ըստ:

Եւ նոյնիսկ հասկցուց որ ամուսնութիւնն ետքը  
միտք ունի մեծկակ դրամագլուխ մը տրամադրել իր  
զաւկին, պայմանաւ որ ինծի հետ ընկեր ըլլայ և մի-  
ասին գործենք:

Բոլոր ասոնք գեղեցիկ խորհուրդներ են, որոնցմէ  
հրաժարիլ քիչ մը դժուար է անշուշտ:

Ասոր համար կը խնդրեմ որ այդ եղածները մոռ-  
նսու և մանաւանդ Մարտիկ էֆ.ի մասին աննպաստ  
ակնարկութիւն մը չընես մօրդ կամ քրոջդ նամակ  
դրած ժամանակ: Երբ ու է մոլութիւն կամ ամօթալի  
արարք ծածուկ պահուի, կարելի է զայն չեղեալ հա-  
մարել: Պատասած զգեստի մը վրայէն երբ նոր բալ-

թօ մը հագնինք ու կոճկուինք ո՞չ ոք կրնայ կասկա-  
ծիլ թէ մեր ներքին լաթերը հին են: Խնդիրը կոճա-  
կին ուշադրութիւն ընելուն վրայ է: Ինչ վաճառա-  
կաններ կան, որոնք առանց դրամագլուխ ունենալու  
վարկով զործերնին կը դարձնեն: Բարոյականն ալ  
անանկ է. Եթէ դրամագլուխ-բարոյական չունենայ  
մարդ և կամ սպասի, կրնայ ինքինք փրկել վարկ-  
բարոյականով. միայն թէ վարպետութեամբ շարժելու է:

Սհա՛ այս նկատումներով կը խնդրեմ որ Մարտիկ  
էֆ.ի ցաւալի միջադէպները մոռնաս ու ալ անոնց  
վրայ չմտածես: Կարծեմ գրեցի քեզի որ հայրը 20-25  
հազար հաստատ հարատութեան տէր մարդ մըն է և  
Մարտիկ էֆ.էն զատ միայն մանչ մը և երկու ամուս-  
նացած աղջիկ ունի:

Ամէնքս սիրով կը համբուրենք քեզի:

Հայր՝ ԳՈԶՄԱ



## Թ. ՆԱՄԱԿ

ԳՈԶՄԱ ԱՌ ՄԻՀՐԱՎԱՆ

Միրելի զաւակս, Միհրանիկ

ի Փընէվ

Երկու օրէ ի վեր մեծ տագնապներու մատնուած  
ենք և չենք գիտեր թէ վերջերնիս ի՞նչ պիտի ըլլայ: Անշուշտ հեռագիրը ձեզի լուր բերու: Ուրբաթ տու-  
տու էր երբ թերթերու մէջ կարգացինք թէ Սուլ-  
թանը Օսմ. Սահմանագրութիւնը վերահաստատած էր  
և հրաման ըրած էր որ անհրաժեշտապէս երեսփխա-  
նական ընտրութիւններու ձեռնարկուի: Բնականարար

ափի ի բերան մնացինք ամէնքս ալ և խսկոյն կռահեցինք որ խաղը մըն էր ասիկա, թէև միամիտներ գըտնուեցան որոնք հաւատացին ասոր: Երէկ թերթերը դարձեալ Սահմանագրութեան հաստատման մասին նորանոր տեղեկութիւններ կը հաղորդէին, իսկ այս առառու, կիրակի, կը յայտարարեն թէ գրաքննութիւնը չնջուած է, թէ կատարեալ ազատութիւն կը վայելնք, թէ խաֆիէները վերցած են ելն:

Այս բաները իմացուելով ժողովուրդը խանդագառուեցաւ և ցերեկէն ետքը թափորներ կազմուեցան որոնք դրօշակներ պարզած սկսոն փողոցները պտըտիլ:

Ես այդ իրարանցումները տեսնելուս պէս տուն եկայ ու ալ գուրս չելայ:

Լրջամիտ, խոնեմ և փորձառու անձերուն կարծիքը այն է որ բոլոր ասոնք պատրաստուած խաղեր են, որպէսզի հասկցուի թէ ժողովրդին մէջէն որոնք են որ Սահմանագրութեան կուսակից են: Դժբախտաբար շատեր այս բանը չեն հասկնար կոր, մանաւանդ մեր անխոնեմ հայերը ինքնինքնին չափազանց կը վտանգեն կոր փողոցներու մէջ ցոյցեր ընելով: Շատ կը վախնամ որ մեծ փորձանք մը կը պատրաստուի կոր ամենուս գլխուն:

Քիչ մը առաջ Մարկոս էֆէնտին եկած էր մեզի, ինքն ալ այդ կարծիքը յայտնեց. «Սուլթանը դիտմաք կ'ընէ կոր այս ամէնը» ըստ, կ'երեւայ որ պալատականները մտածեր են այս վարպետութիւնը իրենց թշնամիները երեւան հանելու համար: Շիտակը մեծ ճարպիկութիւն: Գիտես որ Մարկոս էֆէնտին ինչ լուրջ մարդ է և որքա՞ն կատարեալ կը մտածէ ու որքա՞ն ալ հեռատես է, ինք կը խորհի որ գոնէ մենք վաճառականներս, զոհ չերթանք ասանկ խաղի մը և ասոր համար միջոց մըն ալ մտածած է. այն է հաւատաբարմութեան թուղթ մը ստորագրել և պալստ մա-

տուցանել յայտնելով որ մենք Սահմանագրութիւն չենք ուզեր և թէ գոհ ենք հին գրութենէն: Եթէ խաղը երեւան չելած այսպիսի թուղթ մը տանք. չատ մեծ ազգեցութիւն կ'ընէ և մեզի ուրիշ աչքով կը նային:

Մարկոս էֆէնտին ուրիշ մէկ քանի բարեկամներ ալ պիտի տեսնայ ու անոնց կարծիքը առնելէ ետքը, վաղը պիտի պատրաստենք այդ հաւատարմութեան թուղթը:

Այս բաները մանրամասնօրէն քեզի կը գրեմ, սիրելի զաւակս, որպէսզի ստոյդ գողափար մը ունենաս մեր կացութեան մասին ու դուն ալ թերթերուն գըրածներէն խառուելով անխոնեմ քայլեր չանես: Անշուշտ միշտ հեռու կը մնաս կոր այդ տեղի վտանգաւոր հայեռէն: այս միջոցիս մանաւանդ խոնեմութիւնը կրկնապատկէ, որովհետև հոտ ալ հարկաւ լրտեմներ կան որոնք պիտի ուզեն հասկնալ թէ ով է Սահմանագրութեան համար ուրախացողը:

Ճիշդ այս տողերը գրած միջոցիս դարձեալ փողոցը աղազակ մը փրդու: Հազարուոր անձեր թափոր կազմած դէպի վեր կ'երթան կոր, նուագներու ընկերակցութեամբ և «կեցցէ Սահմանագրութիւն» պոռալով: Ի՞նչ յիմարութիւն, Աստուած իմ. ալդ մարդիկը կ'երեւայ որ բնաւ չեն մտածեր կոր թէ քանի մը օր առաջ Սահմանագրութիւն բառը արտասանողը տքսոր կ'երթար: Սուլթան Համբար զօրութեան վրա ալ կարծես գաղափար չունի, Աստուած խելք տայ իրենց, Աստուած վերջենիս բառի ընէ:

Ամենքս ալ սիրով կը համբուրենք քեզի:

Հայրդ՝ ԳՈՅՐԻ



## Ժ. ՆԱՄԱԿ

ԳՈԶՄԱ ԱՌ ՄԻՀՐԱՆ

Սիրելի զաւակս, Միհրանիկ

ի Ժընեվ

Անցած շաբթուան նամակէս ի վեր այնպիսի բաներ տեղի ունեցան որ առանց քու նամակիդ սպասելու դարձեալ կը գրեմ:

Նախ ըսեմ որ առկէ առաջ գրած նամակս չեղեալ համարէ: Կացութիւնը բոլորովին փոխուեցաւ: Մարկոս էֆէնտին խալը է ըբեր, կեցցէ Մահմանագրութիւն, կեցէ Ազատութիւն, կեցէ Յեղափոխութիւն: Տեսնաս ինչ խանդակառ օրերու մէջ կ'ապրինք կոր այստեղ, մնդք որ հոս չես որպէսզի մասնակից ըլլաս մեր ուրախութեան: Նորէն կը կրկնեմ, անցած շաբթու գրած նամակս պատոէ նետէ, չըլլայ որ մէկու մը ձեռք անցնիր: Ապուշի պէս Մարկոս էֆէնտիին խօսքերուն հաւատացի և անոնց ազգեցութեան տակ յիմար բաներ գրեցի: Այդ մարդը կ'երեւայ որ պարզապէս պունամիծ եղեր է: Արդէն վրան մեծ համարում մը չունէի՛ բայց հիմա համարումս բոլորովին վերցաւ, կը զարմանամ թէ այդ մարդը իր այս խելքով ինչպէս կըցեր է գործ ընել գրամ շահիլ: Բարեբախտար իր առուած խորհուրդը չի գործադրեցինք, եթէ ոչ հիմա ամէնուն քով խաղք ու խայտառակ պիտի ըլլայի՞ք:

Չես գիտեր շաբաթուան մը միջոցին ինչե՛ր անցու: Առաջինները խայտառակաբար վճնտուեցան, մէկ քանի ո աննուեցաւ, շատերը ծեծ կերան, մեծ մասն ալ ձգեց փոխաւ: Հապա՞ այն պալատականները որոնց անունը երանիս տոնելու կը վախնայինք, ի հազիւ կըցա թուիսէ, հեռաներով: Տեսնելու է մեր

թուրք եղբայրներուն սէրը ու համակրութիւնը. հայերուն մատին:

Սահմանագրութիւնը և Ազատութիւնը դուք բերիք մեզի, կ'ըսեն կոր արտասուալից աչքերով:

Իրաւ ալ կ'երեւայ որ մեր հերոս յեղափոխականներուն գործն է եղեր այս: Ես արդէն միշտ կ'ըսէի որ այդ մարդիկը անձնուիրաբար կ'աշխատին. այս մատին շատ անգամ նոյնիսկ կուր ըրած եմ Մարկոս էֆէնտիին հետ: Գիտե՞ս որ երբ 1895 ին յեղափոխականները դրամ կը հաւաքէին ես ալ երկու հարկւր ոսկի տուի, իրաւ է որ մահուան սպառնալիքով իրենք ուզած էին այդ գումարը, բայց ուրիշ հարուստներ գանուեցան որոնք սպառնագիր ընդունելով հանդերձ գրամ չառւին: Ես արդէն սկիզբէն համակիր եղած եմ յեղափոխական շարժումին. Մենք ալ մեր ժամանակին, երիտասարդ եղած ատենիս, յեղափոխական գործերու գլուխն էինք: Կը յիշեմ որ հերայի եկեղեցիին մէջ «Հյիշուի» պուացած եմ Սարդիս Պատրիարքին համար: Անգամ մըն ալ թաղականները հրաժարեցներու համար խոռվութիւն հանեցինք... որ մէկը յիշեմ:

Անշուշտ, սիրելի զաւակս, առկէ առաջ գրած նամակներուս բուն ոգին հասկցած ես և ըստ այնմ վարուած: Ես ստիպուած էի քեզ խրամել որ այդ տեղի յեղափոխականներէն հեռու մնաս, բայց սրտանց շատ գոն էի որ անոնց հետ յարաբերութիւն կը մշակես: Վաստան եմ որ դուն ալ յեղափոխական եղած ես Եւրոպա երթալէզ ետքը: Միոյն ինձի իմտցուը որ Դաշնակցակա՞ն ես թէ Հնչակեան և կամ երկուքը միասին: Հոս հիմա ամէն մարդ կամ Դաշնակցական է և կամ Հնչակեան: Ես ալ անոնցմէ մէկ հատին պիտի գրուիմ, բայց նախ կ'ուզեմ հասկնալ թէ ո՞րն է լաւագոյնը:

Այս ազատութիւնը բարիք մը պիտի ըլլայ հոս

գործի տեսակէտով։ Հիմա ամէն մարդ ազատօրէն  
կրնայ կոր ուզած տեղը երթալ գալ, բան մը որ հայ-  
երուն արգիլուած էր ասկէ առաջ։ Դիտես թէ որքա՞ն  
տուժեցինք մեր տեսւառութին մէջ այս պատճառաւ։

Այդ տեղ «Դրօշակ» անունով յեղափոխական  
թերթ մը կը հաստարակուի եղեր, անպատճառ զիս  
բաժանորդ գըել առուր։ Եթէ ուրիշ յեղափոխական  
թերթերու հասցէներ գիտես՝ անոնք ալ հաղորդէ ին-  
ծի։ Ես հիմա միայն այդ տեսակ թերթեր կրնամ կոր  
կարգալ։ Հին ատենը զրկուած էինք այս հաճոյքէն,  
հիմա գոնէ անոր տեղը լեցնենք։

Եթէ այս միջոցիս Պոլիս գտնուիս, երբեք չպիտի  
ձանչնաս։ Ամէն օր հանգէս, ամէն օր թափօր, ամէն  
օր բանախօսութիւն, ճառ, միթինկ, գումարում։ Մարդ  
իր գործին նայած չունի։ Ես անգամ քննի մը ժամ  
գրասենեակը կը մնամ և յետոյ փողոց կ'ելլամ։ Ամ-  
բոլջ քաղաքը կարծես հարոնիք մէջ է և ամէն ժամ  
ուրախ լուրեր կը հասնին ամէն կողմէ։ Մինչև իրե-  
կուն թերթ կը հրատարակուի և ձեռքէ ձեռք կը  
յափշտակուի։

Մասնաւոր բարեւներս հաղորդէ այդ տեղի յեղա-  
փոխական ընկերներուդ և իմ կողմէս ձականնին  
համբուրէ։

Ամէնքս սիրով կը համբուրենք քեզի։

Հայրդ՝ ԳՈԶՄԱ



## ԺԱ. ՆԱՄԱԿ

Սիրելի Մարտիկ եֆ. Թունակերեան

ի Ռոտուրօ

Կը յուսայինք որ՝ Ձեր խոստման համեմատ՝ բա-  
ցակայութիւննիդ կարձ պիտի տեւէր և այս միջոցիս  
պիտի կրնայիք Պոլիս գտնուիլ։ Բայց ահա ամիսէն  
աւելի է որ մեկնեցաք և տակաւին գալու խօսք չէք  
ըներ ձեր վերջին նամակին մէջ։

Միւս կողմէ՝ անհաճոյ լուրեր լսեցի, որոնց որ  
աստիճան ձշմարիտ ըլլալը չեմ գիտեր, թէև հաւասար  
աղբիւրներէ քաղած եմ։ Դուք խոստացած էիք որ  
այդ տեղի աղջկան խնդիրը միանդամ ընդ միշտ պիտի  
կարգադրէք և ամէն յարաբերութիւն պիտի խզէք հե-  
տը վերջնականապէս։ Արդ, հիմա կ'իմանամ որ այս  
մասին ո՛չ թէ բան մը չէք ըրած՝ այլ ընդհակառակը  
ձեր յարաբերութիւնները այդ անպատիւ արարածին  
հետ, վերահաստատած էք։ Այսպիսի անխօնեմ արարք  
մը, ձշմարիտ խօսելով, չէի սպասեր ձենէ, մանաւանդ  
ձիշտ ամուսնական ու հարսանեկան պատրաստու-  
թիւններու միջոցին։ Ձեզի յայտնած եմ արդէն որ Մե-  
լինէի հետ ձեր ամուսնութիւնը այդ խնդրին կար-  
գագրութենէն կախում ունի։ Քանի առկախ մնայ  
ատիկա՝ բան մը չենք կը բնար ընել։

Կը ինդրեմ որ լրջօրէն մտածէք այս բաներուն  
վրայ և ըստ այնմ գործէք։

Անշուշտ ձեր ամուրիի կեանքին մէջ ներելի բան  
մըն է այդ տեսակ յարաբերութիւնները և ինչպէս  
բերանացի ալ ըստ եմ, երբեք դատապարտելի չեմ  
գտնար այդ տեսակ արարքները երբոր գայթակղու-  
թեան տեղի չեն տար։ Բայց այս պարագային դժբախ-  
տաբար այնպէս չէ, այլեւս դուք ամուրի չէք կրնար

Նկատուիլ քանի որ մօտ ժամանակէն պիտի ամուսնաւնքը: Պէտք է որ այժմէն խղէք ձեր հին կապերը և ամուսինի նոր կեանքին պատրաստուիք: Այս խընդրին մէջ մանաւանդ ծանրակշիռ բան մըն ալ կայ, այն է փոքրիկ մանչուն պարագան: Ապագային համար շատ վտանգաւոր է այդ տղան մօրը քով ձգելը: Ինչու իրրե հայր չէք պահանջեր զայն ու քովէն առնէք, որպէսզի ի հօրէ և ի մօրէ որբ, հոս տեղաւորենք Փրկիչի Հիւանդանոցը և միանգամայն ընդ միշտ խալսինք այդ փորձանքէն:

Այս կը պահանջէ թէ ձեր շահը և թէ ամենուս շահը:

Ճատ գոհ եղայ այդ տեղի առեւտրական հրապարակին մասին ձեր տուած տեղեկութիւններէն: Հոս ալ, փա՛ռք Աստուծոյ, գործերը լաւ են և աւելի լաւանալու յոյս կայ: Մենք, ինչպէս գիտէք, Մեծ կղզի կը գտնուինք և շատ լաւ ժամանակ կ'անցնենք:

Մեծ ուրախութիւն ըզդացի լսելով որ Հնչակեան կուսակցութեան անդամ գրուեր էք: Ես ալ Դաշ-



Մ. Թոշնակերեան

նակցական արձանագրուեցայ և Միհրանիս ալ պիտի գրեմ որ ինքն ալ ուրիշ կուսակցութեան մը արձանա գրուի, արա կերպով ամէնքը բռնած կ'ըլլանք:

Իթթիհատի ալ անդամ գրուելու միտք ունիմ: Պէտք է ժամանակին յարմարիլ:

Աղէկ միտքս ինկաւ: Բանի որ հիմա յեղափոխական կուսակցութեան մը անդամ էք, չէք կրնար ատկէ օգուտ քաղել և սա աղջկան հետ ձեր գործը կարգադրել, տղան ձեռքէն առնելով ու զինքն ալ ստիպելով որ անմիջապէս ուրիշի հետ ամուսնանայ: Հիմա հոս գործ ունեցողը անսոնց կը դիմէ կոր գործը կարգադրելու համար և ամենուն ալ խօսքելուն կ'անցնի կոր:

Այս ըսածիս վրայ լրջօրէն մտածեցէք: Կարծեմ լուսագոյն միջոցը այդ է:

Առ այժմ ուրիշ գրելիք չունիմ: Ամէնքս սկզբով կը բարեւենք ձեզի և ձեր աղնիւ ծնողքը և անհամբեր կը սպասենք ձեր վերադարձին:

Զեր անկեղծ բարեկամը՝  
ԳԱԶՄԱՆ ԴԱՄԻԱՆՈՍԵՍՆ

## ԺԲ. ՆԱՄԱԿ

### ԳՈՉՄԱ ԱՌ ՄԻՀՐԱՆ

Սիրելի զաւակս, Միհրանիկ

ի Ժընեվ

Կը հաստատեմ օգոստոս 8 թուակիրս: Ստացայ քու օգոստոս 10 թուակիրդ: Զարմանալի բան որ գուն անտարբեր ես մեր խանդավառութեան և նոյն խակ տեսակ մը հեգնութիւն ցոյց կուտաս իմ գրած-

Ներուս մասին։ Շատ կը ցաւիմ որ յարաբերութիւններդ այդպէս բոլորովին խզեր ես յեղափոխական հերոսներուն հետ և կը գրես թէ հիմա այլեւս չես կը ընար վերահաստատել զանոնք։ Գոնէ ջանա՛ յեղափոխական ուրիշ կուսակցութիւններու հետ յարաբերութեան մտնելու, քանի որ այդ տեղինները, դրածիդ համեմատ, երես դարձուցած են քեզի։ Կատարեալ մարդը ո եէ յեղափոխական կուսակցութեան մը պէտք է պատկանի. ես միշտ այս համոզումը ունեցած եմ։

Եթէ այդ մարդիկը չըլլային, տակաւին բռնակալութեան ձիբաններուն տակ պիտի չարչարուէինք ու չպիտի կրնայինք ազատօրէն մեր առեւտուրով զբաղելու։ Հազիւ ամիս մըն է որ ազատութիւն ունինք և արդէն գործերը բացուիլ սկսոն։ Գաւառներէն վաճառականները ազատ համարձակ կուգան կ'երթան կոր, ապրանք կ'առնեն, ապրանք կը բերեն կոր։

Սիրուի զաւակս, ջանա՛ որ անպատճառ կուսակցութեան մը մէջ մտնես։ Ես հիմա թունդ Դաշնակցական եմ և քիչ օրէն ենթակօմիտէի ալ անդամ պիտի ըլլամ։ «Ընկեր Գոզմա» կ'ըսեն կոր ինծի և շատ կը յարգեն կոր։ «Դամիսնոսեան» մականունը քիչ մը անյարժար կուգայ կոր իմ յեղափոխական հանգամանքիս, բայց լոնչ ընեմ. գժբախտաբար վաճառական եմ ու չեմ կրնար Ֆիրմաս դիւրաւ փոխել։ Այսուհանդերձ վաճառականութենէ դուրս թուղթերու տակ երբեմն «Դամիսնոսի» կը ստորագրեմ կոր, բայց այդ ականջի պաղ կը հնչէ կարծեմ։

Տեսնես ինչ պերճախօս մարդիկ ունինք մեր կուսակցութեան մէջ, ամէն օր միթինկներ կը գումարենք թաղերը և հազարաւոր ժողովուրդ կուգայ մըտիկ ընելու։ Անգամ մը այդ միթինկներէն մէկուն ես նախագահեցի և քանի մը խօսք ըրի որոնք բուռն կերպով ծափահարուեցան։

Այս յեղափոխութեան մէջ ամէն բան աղէկ է, բայց ընկերվարական սկզբունքները քիչ մը գործը կ'աւրեն կոր, բայց ինչ ընենք առանց փուշի վարդ չըլլար։

Քրոջդ Մելինէին հարսնիքը հաւանօրէն տեղի կ'ունենայ ամիսէ մը։ Ամէն պատրաստութիւն տեսած ենք արդէն։

Կը փափաքէինք որ դուն ալ ներկայ գտնուէիր, բայց գժբախտաբար կարելի չպիտի ըլլայ, քանի որ դասերդ երեսի վրայ թողուլ չես ուզեր ու կը նախընտրես արձակուրդդ ալ այդտեղ անցնել։

Ամէնքս ալ սիրով կը համբուրենք քեզ։

Հայրդ՝ ԳՈԶՄԱ



## ՆՈՅԱԿ Ա.Ռ. ԳՈԶՄԱ Էֆ. ԴԱՄԻՍՆՈՍԵԱՆ

«Սուրել կը հրատարակենք հետեւեալ նամակի իր շահեկան պարունակութեանը նամար, դիտել տալով սակայն նամակագրին թէ մեր Գոզմա «Էֆ. Դամիսնոսեանը վախճանած է արդեն, ինչպես նախապես ծանուցինք։ Այս մանրամասնութիւնը կ'երեւայ թէ մոռցեր է Գոզմայի պատճենան»։

Ազնուածուք Գոզմա եթենտի,

Թոյլ տուէք, Նոր Տարւոյ առթիւ, որ Զեզ ներկայացնեմ իմ խորին երախտագիտութեանս հաւատալին, Զեր այն բարձր հոգածութեան համար, որուն առարկայ ըրիք զիս հինգ երկար տարիներէ ի վեր։

Պարտականութիւնը կը ծանրանայ վրաս, այս տեսակ օրերու առթիւ, ջերմապէս աղօթել Զեր թանկագին կեանքին ու Զեր ազնիւ ընտանիքին երջանկութեանը համար:

Համարձակութիւնը կ'առնեմ այս առթիւ Զեզ յիշեցնելու, շատ խոնարհաբար, այն խոստումները զոր բարութիւնը ունեցաք ինձ ընելու Զեր քով պաշտօնավարութիւնս ստանձնած թուականիս, և որոնց գործադրութիւնը անկարելի գործան գժբախտաբար կարգ մը ծանօթ պատճառներով. քանի մը տարիներէ ի վեր հրապարակիս դրամական ու առեւտրական տագնապը. Զեր նորակառոյց խաներու ծանր ծախսերը, ու Զեր չորհալի դատեր, Օրիորդ Մելինէի նշանառութը — ուրուն առթիւ սրտագիսօրէն կը խնդակախմ — ծանրաբեռնեցին արագօրէն Զեր պիւտձէն ու նկատի ունենալով բոլոր այս պարագաները քաջութիւնը չպիտի ունենայի Զեր բարեգութ ուշադրութիւնը հրաւիրելու իմ վրաս, եթէ այս պարագաներուն քով ուրիշներ շըլային, աննախընթացօրէն հասութաբեր. — այսպէս, ծանօթ տեղէն գտնուած հնութիւններուն վաճառումը, Ամերիկայի մէջ, անհաշուելի գումարներու փոխարէն, որոնք Զեզի առիթը տուին Զեր խանը շինելու, վերջերս Պոլոյ քարափին քով կեցած հառւընթընի ընկղմումը, որուն վրայ Զեր ունեցած հազար ոսկիի ապրանքը յաջողեցանք կեղծ հաշուեգրով հինգ հազար ոսկի արժեցնել. վերջապէս, Զեր պաշտօնեայ Ատոմի մահուամբը, իր հօրմէն ժառանգած ու Զեր քով պահ գրած հազար Օսմ. ոսկի գումարին Զեզ սեփականացումը, որուն առթիւ նուիրական պարտականութիւն մը համարեցի, Զեր թէլտրանքին վրայ, կեղծ երդում ընել իր մօր բացած դատին առթիւ — ահաւասիկ պարագաներ, Ազնուաշուք էֆէնտի, որոնց գումարը կը հասնի մօտ երեսուն հազար ոսկիի. թէ և այդ գումարը մեծ կարեւորութիւն մը չունենայ Զեզ համար,

բայց ես չեմ կրնար ինքզինքո արգելի ուրախութիւնս յայտնելու անոր յաւատջ բերումին մէջ ունեցած մասնակցութեանս համար: Կը յուսամ թէ անսահման բարութիւնը պիտի ունենաք նիւթական վիճակութեալուելու համար հինգ տարիներ առաջ Զեր ըրած խոստումը վերյիշելու. — ինչպէս գիտէք, նոյն թուականին յայտարարեցիք ինծի թէ գուք անուս պաշտօնայի մը պէտք ունիք, օրական մէկ քանի ժամուան համար, Զեր գանձումները ու մանր մունր յանձնարարութիւնները կատարելու, հետեւաբար չպիտի կրնայիք իմ լեզուագիտութենէս ու հաշուակալութենէս օգտուիլ, այս առթիւ երկուքուկէս Օսմ. ոսկի ամսական յատկացուցիք: Զեր քով պաշտօնավարութենէս մէկ ամիս յետոյ Զեր վաճառատան երեքլեզուեան թղթակցութիւնը ինձ յանձնեցիք ու չորհակալ եմ մանաւանդ որ վստահութիւնը ունեցաք Զեր տոմարներն ալ ինձ յանձնելու, որոնց մասին ամէն ջանք ըրի, օրական տամներեք ժամ աշխատութեամբ, Զեզի գոհ ձգելու համար: Դժբախտաբար սակայն վերոյիշետլ ծանօթ տագնապները պատճառ եղան որ միջոցը չունենաք իմ ամսականիս մասին խորհելու: Ուստի ներկայիս կուգամ խոնարհաբար ինսդրելու որ այս տարի երկուքուկէս Օսմ. ոսկի ամսականս չորսի բարձրացնէք, որպէսպի մէկ ու կէս ոսկի յաւելումով ի վիճակի ըլլամ խանգարուած առողջութիւնս գարմանելու, այդ մէկ ու կէս ոսկին բժիշկի ու դեղերու յատկացնելու համար:

Կանխաւ չորհակալութիւններով,

Զեր անձնուեր պահօնեան

ԾԱՆՈԹ. — Ստորագրութիւնը զանց կ'ընենք դնել, մանաւանդ որ, ինչպէս ըսինք վերը, այս նամակը ուղղուած է հանգուցեալ անձի մը:

.....◎.....

## ԺԳ. ՆԱՄԱԿ

ԳՈԶՄԱ ԱՌ ՄԻՀՐԱՅՐԱՆ

Սիրելի զաւակս՝ Միհրանիկ

ի Փընէվ

Ստացած եմ գրած նոյեմ. 17, դեկտ. 12 և դեկտ.  
28 թուակիր նամակներդ, բայց դժբախտաբար այն-  
չափ զբաղած էի որ չկրցայ ամենուն ալ զատ զատ  
պատասխանել, ի փոխարէն մայրդ և Մելինէն գրեցին  
քեզի և անշուշտ իմաց տուին նաև որ ամիսի մը չափ  
բացակայ մնացի Պոլիսէն ու գաւառները պտոյտ մը  
ըրի թէ՛ առեւտրական գործերով և թէ մասնաւոր  
դիտաւորութեամբ մը:

Այդ մասնաւոր դիտաւորութիւնս էր Օսմաննեան  
Խորհրդարանի անդամ Ընտրուիլ, սակայն չյաջողեցայ  
կարդ մը պատճառներով, որոնց վրայ չեմ ուզեր  
ծանրանալ: Սաշափը ըսեմ որ յեղափոխական կուսակ-  
ցութիւնները զիս յուախաբ ըրին: Եթէ անոնք ու-  
զէին՝ կրնային տեղէ մը զիս Ընտրել տալ, բայց չաշ-  
խատեցան և տաիկա պարզապէս ապերախտութիւն էր:  
Իրենց ամէն հանգանակութիւններուն մասնակցեցայ,  
ամէն թերթերուն բաժանորդ գորուեցայ, իրենցմէ մէկ  
քանին տունս ճաշի հրաւիրեցի, դուրսը պատահած ա-  
տենս միշտ պատուասիրեցի, իրենց գաղափարակից  
ձեւացայ, ճառերնին մտիկ ըրի. ծափահարեցի և այդ  
ամենուն փոխարէն զիս մէպուս մը Ընտրելու իսկ  
արժանի չտեսան:

Մելինէն հարսնիքը փառաւոր կերպով կատարե-  
ցինք: Բոլոր բարեկամներն ու ազգականներն ներկայ  
էին, գուն միայն կը բացակայէիր: Այդ գործն ալ  
վերջապէս լմացաւ, թէև ո՛չ բոլորովին ուզածիս պէս,  
իբրև գործի մարդ, Մարտիկ էֆէնտին շատ ճարպիկ

ու վարպետորդի է և առեւտուրի ամէն հնարքներուն  
տեղեակ: Դիւրաւ չխաբուիր և ինք գիտէ ուրիշները  
խաղելու կերպը, ինչ որ վաճառականութեան մէջ մեծ  
յատկութիւն մըն է: Բայց ափսոս որ ներքին կեանքը  
շատ կանոնաւոր չէ. կարգ մը թերութիւններ ունի  
որոնք կրնան անհաջոյ հետեւանքներ ունենալ: Դուն  
ալ արդէն նշմարած էիր այդ բանը: Բայց ես խորհե-  
ցայ որ գրամը շատ բան կը ծածկէ և յետոյ, ժամա-  
նակ անցնելով, կարգ մը մոլութիւններ վերջ կը  
գտնեն, ինդիրը այն է որ գրամական նեղութիւն  
չըլլայ:

Հիմա Մելինէն հետ զատ տուն եղած են, թէւ  
մեր մօտերը կը բնակին. քոյրդ միշտ կուգայ կ'եր-  
թայ մեզի: Քանի մը օր առաջ նոյնիսկ շաբաթի մը  
չափ մնաց: Մէջներին պղափիկ խնդիր մը ունեցած էին,  
ասոր համար Մելինէն մեզի եկած էր ու չը ուզեր  
ամուսնոյն քով գաւանալ: Մարտիկ էֆէնտին քիչ մը  
բարկացուտ է, մանաւանդ երբոր քիչ մը աւելի խմէ:  
կ'երեւայ որ մէջներին վէճ մը ծագեր է և ինքինք  
չկրնալով զսպել՝ Մելինէն ծեծեր է, բաւական ծանր  
կերպով:

Բարեբախտաբար խնդիրը չիմացուեցաւ և գործը  
անուշ տեղը կապեցինք ու համոզեցինք Մելինէն որ  
իր տունը վերադառնայ: Եթէ իմացուէր՝ ա՛լ լրագիր-  
ներուն մէջ պիտի անցնէինք ու ամենուն բերնին ծա-  
մոց պիտի ըլլայինք: Ասանկ բանները երբոր չիմաց-  
ուին, կարեւորութիւն չունին ու կը մոռցուին  
կ'երթան:

Ես խրատեցի Մելինէն որ ոչինչ բանները խնդիր  
չընէ ու էրկանը հետ աղէկ երթայ, մանաւանդ որ այս  
միջոցիս իր գործերը շատ աղէկ են ու լաւ դրամ կը  
շահի կոր: Ճայրն ալ, ինչպէս գրած եմ արդէն, հաս-  
տատ հսրսութեան տէր է, այնպէս որ ապագային

Խիստ փայլուն դիրք մը կրնայ օւնենալ Մարտիկ  
էֆէնտին:

Այս իրողութիւնները քեզի կը գրեմ, որովհետև  
կ'ենթադրեմ որ Մելինէն իր նամակներուն մէջ դըժ-  
գոհութիւն, յայտնած ըլլալու է իր ամուսնական կեան-  
քէն: Ուստի կ'ուզեմ որ ամէն բան տեղն ի տեղօք  
գիտնաս և ըստ այնմ խրատես զինքը որ համբերող  
ըլլայ:

Նոր տարին կը չնորհաւորեմ և յաջողութիւններ  
կը մաղթեմ դասերուդ մէջ: Կը յուսամ որ միշտ աղէկ  
ու առողջ ես ու ինքինքիդ հոգ կը տանիս:

Մեր քաղաքական կացութիւնը բաւական խոռ-  
նաչփօթ է այս միջոցիս. կուսակցութիւնները իրարու-  
գէմ պայքար կը մղեն և նոյնիսկ իրարու սպառնա-  
լիքներ կ'ընեն: Բայց, փա՛ռք Աստուծոյ, բռնկալու-  
թեան շրջանին մէջ չենք, թերթերը ազատօրէն կը  
գրեն ամէն բան և երթեւեկութիւնները միշտ  
ազատ են:

Ես դարձեալ միտք ունիմ մօտերս ներքին գա-  
ւառները երթալու գործերս ընդարձակելու համար:  
Պէտք է օգուտ քաղել առիթէն ու չքնանալ: Մրցումը  
շատ մեծ է և վայ ետև մնացողին:

Բացակայութեանս միջոցին մայրդ կը գրէ քեզի  
ու լուր կուտայ ամենուն վրայ, ես ալ եթէ ժամանակ  
գտնեմ՝ կը գրեմ, բայց իմ վրաս շատ յոյս մի՛ զնէր:  
Ամէնքս սիրով կը համբուրենք քեզի:

Հայր՝ ԳՈԶՄԱ



## ԺԴ. ՆԱՄԱԿ

### ԳՈԶՄԱ ԱՐ ՄԻՀՐԱՅ

Սիրելի զաւակս՝ Միհրանիկ

ի Փընել

Նախ և առաջ ըսեմ որ ամէնքս ողջ և առողջ  
ենք, թէւ շատ մեծ տագնապ մը անցնելու վրայ ենք:  
Հեռագիրները անշուշտ այստեղ պատահածներուն լու-  
րերը բերէն և զուն ալ մտատանջութեան մէջ ըլ-  
լալու ես:

Հաղիւ շաբաթ մըն էր Պոլիս վերադարձած էի,  
զրբ այս մարտ 31ի գէպքը պատահեցաւ: Զատիկը  
քթերնոււս բերներնոււս եկաւ:

Ահա՛ պատահած գէպքերը:

Թօփ Գաբու Սէրայի որսորդ զօրքերը ոտքի կ'ել-  
լին և երդում կ'ընեն կառավարութեան կարգ կանո-  
նը խանգարողներուն ձեռքէն իշխանութիւնը առնելու  
և Շէրիաթի գործադրութիւնը պահանջելու: Յետոյ,  
հօճաներու առաջնորդութեամբ Այս Սօֆիայի հրապա-  
րակը կը գիմեն, ուր կը գտնուի Խորհրդարանը:

Երբ լուրը իմացուեցաւ՝ ամէնքս սարսափի մատ-  
նուեցանք: Ի՞նչ կար, ի՞նչ պիտի ըլլար: Ընդհանուր  
իրարանցում մը կը տիրէր ամէն կողմ: Փողոցները  
լեցուն զինուորներ կը տեսնուէին, առանց սպայի, ո-  
րոնք գէպի Պոլիս, Այս Սօֆիայի հրապարակը կը գի-  
մէին: Այդ զինուորներուն միացած էր նաև փաթթո-  
ցաւորներու ահագին բազմութիւն մը:

Այս զինուորական ապստամբութեան վրայ՝ Պոլսոյ  
և Ղալաթիոյ բոլոր խանութները և մեծ հաստատու-  
թիւնները գոցուեցան: Ես ալ գրասենեակը գոցեցի ու  
բերա երոյ:

Յետոյ իմացանք որ Այս Սօֆիայի և Սուլթան Ահմէտի հրապարակը հաւաքուած զինուորները կարդ մը պահանջումները ըրուծ են, որոնց առաջին և գլխաւորն է Շէրիաթի օրէնքին անթերի գործադրութիւնը:

Կ'ըսուի թէ խառնաշփոթութեան միջոցին քանի մը երեսփոխաններ սպաննուած են, ինչպէս նաև Դատական նախարար Նազրմ փաշա:

Երէկ աստու, զինուորական ապստամբութեան երկրորդ օրը, տակաւին հանդարտութիւնը չէր տիրած ու անընդհատ հրացանի ձայներ կը լսուէին:

Ես հերա մնացի և հազիւ համարձակեցայ երթալ Թօքաթլեանի սրճարանը նստելու. ուր հաւաքուած էին բաւական բարեկամներ:

Զինուորները Շիտակ ձամբէն կ'անցնէին կը դառնային օդին մէջ հրացան պարպելով: Վերջապէս իմացանք որ Սուլթանը ընդունած է զինուորներուն պահանջումները և նոր գոհին մը կազմած Թէվֆիք փաշայի նախարարապետութեան ներքե:

Եւ սակայն յուզումը չէր հանդարտած և սարսափելի բաներ կը պատմուէին:

Կ'ըսուէր թէ Շուրայի Խւմմէթի ու Թանինի տպարանները աւարի արուած էին, թէ շատ մը սպաներ մեռցուած էին, ևայլն, ևայլն:

Այսօր բաւական խաղաղ վիճակ մը ունինք, թէև ես գարձեալ գրասենեակ չգացի: Հրացանի անախորժ ձայները դադրեցան և կը յուսանք որ չնորհիւ Վեհափառ Սուլթանին և ձեռք առնուած միջոցներուն ամէն բան կը կարգադրուի այսօր վաղը:

Շիտակը ըսելու համար, ես զինուորներուն և փաթթոցաւորներուն կողմն եմ, ինչպէս բոլոր լուրջ ու ողջախոհ մարդիկը: Մարկոս էֆէնտին աւ, որ փորձառու մարդ մըն է, կ'ըսէ թէ՝ ամէն ազգ պէտք է

աէր ըլլայ իր կըօնքին, պետութիւնը առանց Շէրիաթի չըլլար. փրկութիւնը Շէրիաթին մէջն է: Շէրիաթը արդէն սահմանադրութեան դէմ չէ եղեր, այլ Ընդհակառակը բուն սահմանադրութիւնը Շէրիաթին մէջն է եղեր: Ասկէ զատ, ատանկ չըլլայ նէ՝ ի՞նչ կ'ըլլայ: Ութը ամիսէ ի վեր Սահմանադրութիւն ունեցանք Տէնչ եղաւ: Զիս մէտուս անգամ չուզեցին Ընտրել: Թո՞ղ առեւտուրը ազատ ըլլայ, բաւական է, Խորհրդարան, մամուլ և լն. ի՞նչ կարեւորութիւն ունին: Արդէն յեղափոխական կուսակցութիւններն ալ համը կը փախցնէին կոր և ասանկ դաս մը պէտք էր իրենց: Ես աղէկ որ առաջին օրէն չխանդավառուեցայ և շուտով հասկցայ որ ամենուն տակը պարապ էր: Իմ ետեւէս շատ ինկան որ կուսակցութեան մը անդամ գրուիմ, բայց մերմեցի: Որքա՞ն խելացի վարուեր եմ: Շնորհիւ Շէրիաթին կը յուսամ որ ամէն բան կարգին կը մանէ և քիչ մը շունչ կ'առնենք: Վեհափառ Սուլթանը շատ խելացի վարուեցաւ այսպէս նորելուզ մարդիկը հեռացնելով: Պետութիւն մը խօսքով կամ Սահմանադրութեանը չկառավարուիր, այլ ուժով, այսինքն զօրութեամբ: Երբ կառավարութիւն մը որ վախ չկրնար ազգեր, փարա չըներ: Օրինակը ահա՝ առջեւնիս է:

Այս Շէրիաթ ուզողները կ'երեւայ որ շատ լուսաւորեալ հօձաներ են եղեր և իրենց սկզբունքները շատ յառաջիմական: Իրենց պահանջումներն ալ ձշմարիտ խօսելու համար, շատ օրինաւոր, շատ օգտակար, ամէնքն ալ փորձառութեան, ողջմտութեան վրայ հիմնուած:

Մէկ խօսքով, թէև այս վերջին դէպքերէն բաւական յուզում կրեցինք, բայց ի վերջոյ արդիւնքը ամէնքս ալ գոհացուց: Միայն թէ ինդիրը այն է որ նոր դէպքեր չպատահին և կարենանք մեր գործերովը

զբաղիլ, որովհետև եթէ անիշխանական վիճակը շարունակէ առեւտուրը բոլորովին պիտի դադրի, արդէն երեք օրէ ի վեր բնաւ գործ մը տեսած չունինք:

Առ այժմ կեցցէ՛ Վեհափառ Սուլթանը:

Ամէնքս սիրով կը համբուրենք քեզ:

Հայրդ՝ ԳՈԶՄԱ

ՎԵՐՁ



## Յ Ե. Պ. ԱՐԺՈՂ ԴԻՐՔԵՐ

Դատապարտեալը եւ երազի մը գինը (Արփիարեան) Կախաղանեն ես (Եիսանեան)  
Թամարա Անձկութեան ժամեր Զ. Եսայեան)  
Սեւ թէ ներմակ, Թատերգութիւն  
Աւը հեքեաքներ  
Ծովին աղջիկը  
Թալիսման  
Մանկական աշխարհ  
Մայր (Մելօյեան)  
Մելիքան Նուրիք հանրմ (Զ. Եսայեան)  
Կախաղանեն ես  
Երազահան  
Խօսակցութիւն Արաբերէն  
» Ֆրանսերէն  
» Անգլերէն  
Սուլեյմ հին դեմքերու

## Զ Ե. Պ. ԱՐԺՈՂ ԴԻՐՔԵՐ

Մէկ միլիոն ոսկինոց պանիճորը  
Աղա Նազար  
Հեռավդիս (Կ. Ֆլուկէր)  
Կենդանիներուն զործադուլը  
Ախունը ինչո՞ւ պղտու ե  
Ֆերէր  
Ազատութեան շաւիղը  
Հայաստանի ոսկեհանիները  
Ազգային բարեւար (Օտեան)  
Ալիքներ  
Իզմիրեան եւ Դուրեան

Ճեպինքաց նորածինը (Օտեան)  
Զաւալլըն, բարզմ.      »  
Պատերազմ եւ խաղաղութիւն (Օտեան)  
Համբարձման վիճակ (Չիքունի)  
Պղնձն խղամ      »  
Մանեկ (Տօֆք. Տաղաւարեան)  
Պատօսն խոմբալ է, Կատակերգութիւն  
Վարձուած սենեակ  
Փարոսի պահապաներ  
Ամուրիներ (Ռ. Բուշօն)  
Մերկ պատանի զինուոր  
Դատաստանի օրեր  
Քերայի զիւերներ  
Ներլոց Հոլմս, Յ պրակ  
Կիւրուած մատանիին առասպելը  
Մրժի վերերը  
Գեղարուեստին դեր (Ե. Տեմբրնեան)  
Մեծ զիտուն մը  
Քեօր օղլուի արկածները  
Կատակ մը (Արփիաւեան)  
Կիւլիվէրի ճամբարդութիւնը  
Կասթօն Լիլի, Կատակերգութիւն  
Հերեարևներ (Կրիմ Եղբայրներ)  
Փորութիւր (Փ. Զօնրապ)  
Շարլ Լինիէ  
Առողջապահութիւն  
Թօսք Շուման

Ստունորու համար դիմել հետեւեալ հասցէին.—

VAHAN ZARTARIAN  
18, Rue Tewfik — LE CAIRE - Egypte

ՀՀ Ազգային գրադարան



NL0371317

61.446